

ԴԵՊԻ ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄԵԱԿ - 4

## ՄԿՐՏԻՉ ՄԱԼԻՍԱՍԵԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԻ  
ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- 4 -

## ԹՌԻԱՔԱՆԱԿ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱԼԻՍԱՍԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ  
ՄՈՆԹԹԷԱԼ  
1997

**ՅՈՒՆԻՎԵՐՍԱԿ**  
**POPULATION**

Կողքին՝ հատուած Գրիգոր Խանջեանի «Վարդանանք»էն:

## ՄԿՐՏԻՉ ՄԱԼԻՍԱՍԵԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԻ  
ԱՐԱՋԱՐԿՆԵՐ

- 4 -

## ԹՈՒԱՔԱՆԱԿ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱԼԻՍԱՍԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ  
ՄՈԽԹԹԷԱԼ  
1997

Malkhassian, Megrditch  
Armenian National Paradigms: Population

Copyright © 1999 by Malkhassian Foundation.  
All rights reserved under international and Pan-American Copyright  
Conventions.  
No part of this publication may be reproduced or transmitted in any form or  
by any means, electronic or mechanical, including any information storage  
retrieval system, without written permission from the publisher.

MAYRENI PUBLISHING 1997

ԹՌԻԱՔԱՆԱԿ հետազօտութիւնը անվճար պիտի բաժնուի Հայաստանի Հանրապետութեան և Սփիտոքի ուսումնական հաստատութիւններուն, կրթական-հասարակական գործիշներուն և պաշտօնավարներու՝ տեսակէտներ և առաջարկներ ստանալու ակնկալութեամբ:

Ընթերցողէն կը խնդրուի իր տեսակէտը փոխանցել հետևեալ հասցէին՝

The Malkhassian Foundation  
1922 ouest, Ste-Catherine  
Montréal, Qué. H3H 1M4

Կանխաւ շնորհակալութիւն՝ թէ՛ խրախուսելիք և թէ՛ ընդդիմախօսելիք բարեկամներու:

Նաև շնորհակալութիւն՝ տիկնոջ՝ Ծաքէին, և թանկագին բարեկամին՝ Զարեհ Մելքոնեանին, որուն աշխատանքը այս գործին սկզբնական խմբագրութեան մէջ անգնահատելի է:

**Մ.Մ.**

---

«... Նկատելի է այսպիսի մի օրինաչափութիւն,-  
ԵՐԲ ՄԻ ՄԱՐԴ, ԿԱՄ ՄԻ ԱՄԲՈՂՋ ԺՈՂՈՎՈՒՐԴ  
ՑԱՆԴԳՆՈՒՄ ԵՆ ԱՅՆՈՒՍՄԵՆԱՑՆԻ ՄՕՏԵ-  
ՆԱԼ ԳԵՐ-ԽՆԴՐԻՆ, ԵԻ ԵԹԷ ԴՐՍ. ԻՐԱԿԱՆԱ-  
ՑՈՒՄԸ ԹԻՌՈՒՄ Է ՈՒԺԻՑ ՎԵՐ ՄԻ ԲԱՆ՝ ԱՅԴ  
ՄԱՐԴՈՒ ԿԱՄ ԱՅԴ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ ԻՆՉ-ՈՐ  
ՏԱՐՈՐԻՆԱԿ ՆԵՐԾՆՉՄԱՄԲ, ՈՒ ՃԻՇԴ ՀԱՐ-  
ԿԱԽՈՐ ՊԱՀԻՆ ՑԱՅՏՆԻՈՒՄ Է Ե՛Ի ՈՒԺ՝ ԱՆԵ-  
ՐԵՒՄԿԱՑԵԼԻ ՉԱՓԵՐԻ ՀԱՄՆՈՒ, Ե՛Ի ՑԱՄԱ-  
ՌՈՒԹԻՒՆ՝ ԽԵԼԱՑՆՈՐՈՒԹԵԱՆԸ ՄՕՏԵՑՈՂ, ԵԻ  
ԳԵՐ-ԽՆԴՐԻԲ ԼՈՒԺՈՒԱԾ Է....»:

#### **ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐԶԱՏԵԱՆ**

(Բնագիտ)

Հայաստան

---

## ՄՈՒՏՔ

1992 թուականին Երևանի մէջ լոյսին եկաւ աշխարհագրագէտ Դոկտ. Փրոֆ. Գրիգոր Աւագեանին «Հայաստանը Եւ Հայերս Աշխարհում» հետաքրքրական գրքով: Հեղինակը կը յայտնէր թէ գրքովին նպատակն է օգնել ընթերցողին, որ աւելի իրատեսօրէն գնահատէ Հայաստանի և հայերու արդի վիճակը, և որոնէ յարատևման ողիներ՝ մշակելով յառաջդիմելու համազգային հիմնաւոր ծրագիր: Պարտրատ' ենք ոնենալ նման ծրագիր, կը շեշտէր ան իր գրքովին աւարտին, և որբան շուտ՝ աչնքա'ն լաւ:

Բայց ինչո՞ւ տագնապած էր հեղինակը: Որովհետև իր ոստումնասիրութեան իրքն հետևանք յայտնաբերած էր թէ «հայերու ընդհանուր թիւին կէսէն պակաս է Հայաստան ապրող հայերու թիւը», հակառակ անոր որ «հայրենիքի ոմքը և տեղը աշխարհի մէջ պայմանաւորուած է անոր մէջ ապրող բնակչութեան թուով» (Էջ 89):

Փրոֆ. Աւագեանը Հայաստանի աշխարհագրական պայմաններն ու բնական հարաստութիւնները հաշող առնելով, կը հիմնաւորէր այն տեսակէտը՝ թէ մինչև ՏԱԱԾ ՄԻԼԻՈՆ հայեր, առանց լորչ դժուարութեան, կրնային բարեկեցիկ կեանք մը ոնենալ Հայաստանի մէջ:

• • •

Երբ մօտաւորապէս տասը տարիներ առաջ Պրճ. Մ. Մալխասեանը իր ներկայ հետազօտութիւննը պատրաստած է Մալխասեան Հիմնարկութեան Տնօրէններու Խորհուրդին համար, ի՞ր ալ հիմնական մտահոգութիւնն է եղած մեր ժողովուրդին յարատութեան հարցը՝ համազգային շահանհշով մշակուած ծրագրի մը հիման վրայ:

Թիւը անկիւնաբարային նշանակութիւն ոնի որևէ ժողովուրդի համար: Անով պայմանաւոր է մշակութային, տնտեսական, ուազմական թէ ամէն այլ տեսակի բնագաւառի օրութիւն, որովհետև՝

- Թիիւ-ը որա՛կ է նախ.
- Թիիւ-ը մարդո՛ւծ է նաև.
- Թիիւ-ը սպառողական շուկայ է մա՛նաւանդ, ո՛չ միայն արդիւնաբերական արտադրանքներու առումով, այլև ու յա՛տկապէն՝ մշակոյթի իմաստով: Այս վերջին պարագան առաւել ևս կարևոր է

մեր ժողովուրդին համար, որովհետև ի տարբերութիւն մեզի մեր-ձակաց աշխարհագրական տարածքներու մէջ պատմոթեան հողո-վոյթի ընթացքին անհետացած այլացեղ ժողովուրդներու՝ մեր մշա-կոյթը կրցած է ապրեցնել մեզ ընթացքին դարերու, երբ գիտական և հաղորդակցական միջոցները տակարակին չեն յառաջացրցած այն յեղաշրջումը, որուն ականատեսներն ենք այսօր, և որ անցնող բոլոր դարերու այլաւերիչ ուժերը կը գլէ կ'անցնի իր ուժգնութեամբ:

Ժողովուրդի մը թիւը, անշուշտ, ողողակի կախնեալ է թէ՛ անոր հայրենիքին, և թէ՛ հայրենիքն դուրս ապրող հաւաքականութիւն-ներու տեղական պայմաններէն: Եթէ նպաստաւոր են պայմանները՝ թիւը կ'աճի. հակառակ պարագային՝ ականատես կը դառնանք թիւի հուազումի և մինչև իսկ անհետացումի....:

Հետաքրքրական պատկեր մը պիտի ստեղծուի մեր աչքերուն՝ Արևմտեան և Արևելեան Հայաստանի հայ բնակչութեան վիճա-կագրական հետևեալ տուեալ ներուն բաղդատականը կատարելու պարագային:

1831-ին, Արևելեան Հայաստանի Ռուսիոյ կցուելէն անմիջա-պէս եւոք, Արևելեան Հայաստանի հայութիւնը կազմած է 161,700 հոգի....: 1913-ի մարդահամարով, այդ թիւը բարձրացած էր 1,010,000-ի. այսինքն՝ բազմապատկուած 6.2 անգամ (Հայկական Սովետական Հանրագիտարան, Սովետական Հայաստան,- ԺԳ. լրացուցիչ հաստր,- Երևան, 1987, էջ 23):

1822-ին, ըստ գերման վիճակագրող Հասէլին, ամբողջ Օս-մանեան Կայսրութեան մէջ բնակող հայերու թիւը եղած է 1,690,000: 1913-ին, ըստ գերման ծանօթ հայասէր Դոկտ. Եռիան-նէս Լեփսիուսին, այդ թիւը եղած է 1,880,000: Օսմանահպատակ հայոց վերաբերող այս տուեալները ճշգրիտ ըլլան թէ ոչ, մէկ բան կը մնայ անվիճելի,- Օսմանեան Կայսրութեան մէջ հայերու թիւը համարեա աճ չէ արձանագրած ամբողջ 90 տարի, մինչ Ռուսական Կայսրութեան հայոց թիւը 80 տարուան ընթացքին աճած է 6.2 անգամով....:

Այս թուանշանները եթէ մէկ կողմէ ցոյց կու տան՝ թրքացումի և ոռուացումի քաղաքականութեան, կամ յայտնի և անյայտ բռնահնանութիւններու թէ կոտորածներու աստիճանաշափերը, միևնու կողմէ կը հաստատեն կարևորութիւնը յարաբերաբար թոյլատու պայմաններու ներքև հողի մը վրայ, ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՀՈՂԻՆ ՎՐԱՅ ՀԱՄԱԼՍՈՒՄԲ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ:

Այս թուանշանները նաև ցոյց կու տան թէ Մ. Մալխասեանը իրապաշտ մօտեցում մը որդեգրած է իր հետազօտութեան մէջ՝ յա-ջորդող երեսնամեակին հայութեան թիւը կրկնապատկուած տեսնելու

իր թելադրական ցանկութեամբ:

Աւելի՞ն, այս թուանշանները նաև կը հաստատեն անհերքելի ճշմարտութիւն մը, որուն ապացոյցները բազմաթիւ առիթներով տուած է մեր պատմութիւնը,- թիվի բացակայութիւնը կը նշանակէ՝ կորուստ պապենական հողերու (Արևմտեան Հայաստանի և Նախիջևանի ներկան). Վտանգում ինքնիշխանութեան (Հայաստանը Աստրականի և Վրաստանի միջև բաժնելու ստավինեան ծրագիրը). անհետացում (Լեհաստանին մինչև Ծափա և Սումաթրա կորուստ գաղութներու պարագան). մինչ թիվի ներկայութիւնը կը նշանակէ՝ վերատիրացում պապենական իրաւունքներու (Արցախի օրինակը). պահպանում ազգային ինքնութեան (իրաւունահան գաղութին օրինակը):

Կարելի չէ չտագնապիլ՝ երբ մէկ կողմէ ականջալուր կը դառնանք Հայաստանի արդի պայմաններուն բերումով հարիւր հազարաւոր հայերու իրենց հայրենիքն արտագաղթին, իսկ միւս կողմէ կը տեղեկանանք թէ մեր հայրենիքը շրջապատող ազգեր երեսուն տարի եւսք պիտի կրկնապատկած ըլլան իրենց բնակչութեան թիւը:

Ես կարելի չէ չվրդովիլ՝ երբ այս գրողին մէջ ներկայացուող Ահարոն Ահարոննեանին սուեալներէն կը պարզո՞ւ թէ հայ հոգևոր իշխանութիւններ հայ գաղթօճախներու մէջ քիչ անգամ և չնշին շափով կը պայքարին խառնամուսնութիւններու և ուժացումի դէմ, մինչ Զօրի Բաղադրեանին սուեալներով կը հաստատո՞ւ թէ օսուար հոգևոր իշխանութիւններ իրենց հաւատացեալներուն բազմածնութիւնը սրբազն սկզբունքի վերածած կը շրջին դուռէ դուռ....:

Ժողովրդագրական խնդիրները տարբեր ժամանակաշրջաններու տարբեր կ'ըլլան իրարմէ, ինչպէս որ տարբեր կ'ըլլան տարբեր երկիրներու պարագային:

Եթէ Միացեալ Նահանգներու ժողովրդագրական քաղաքականութիւնը կը խարսխուի թուասահմներու (քոթա) վրայ, որպէսզի հակակշուի օսուար ներկոսը, ապա Թուրքից ժողովրդագրական քաղաքականութեան ամենամեծ մարտահրաւերը կը կազմէ Թուրքից քիրտ բնակչութեան յարաբերաբար արագ աճը և այդ աճին հետևանքով Թուրքից ի վճաս ապագայ Քիւրտիստանի մը գոյացութեան կանխարգիլումը:

Մե՛ր պարագային, մեր ժողովրդագրական ներկայ քաղաքականութիւնը հարկադրանքին տակ է ունենալու եռուսանի խարիսխ մը,- կանխարգիլում արտագաղթի, մերձակայ երկիրներու բնակչային աճին յարաբերակցութեամբ բազմացում հայ բնակչութեան թիւի, պահպանում գաղթահայութեան:

Այս եռադէմ քաղաքականութեան արդինաւորութիւնը անմիշականօրէն կախեալ է համահայկական ժողովրդագրական ծրագ-

ոի մը մշակումն և հայութեան բոլոր հատուածներուն գործակցութեամբ անոր գործադրութենէն:

Ահաւասիկ նման կարևոր աշխատութեան մը ազգովին լծուելու կենսական հարցն է որ բարձրացուցած է Պրն. Մ. Մալխասեանը իր «Թուաքանակ» հետազօտութեամբ, հայ հանրութեան ուշադրութեան բերելով թուաքանակի անկիւնաքարային հարցը՝ մեր ժողովուրդին ապագայ լինելութեան և այդ լինելութեան որակին տեսանկինով վերլուծելով զայն:

Տեղին պիտի ըլլայ աւելցնել թէ այս հետազօտութիւնը անքակտելի ամբողջութիւն մը կը կազմէ Մալխասեանին նախորդուածնակիրութիւններուն հետ: Թիւը թէ՛ կը նպաստէ ազգային տնտեսութեան մը կամ ազգային ֆինանսի զարգացումին, և թէ՛ կը նպաստարուի անոնց զարգացումն: Թէ՛ զարկ կու տայ ազգային կրթութեան և մշակոյթին, և թէ՛ կը խթանուի անոնցմով:

Կը մնայ մատլել որ յանուկապէս կրթական և կրօնական պատասխանատուներ իրենց ուսումնաքարողչական գործունէութեան ընթացքին միշտ նկատի ունենան թիւը իր անկիւնաքարային նշանակութեամբ:

## Դոկտ. ՎԱՀԵ ՂԱԶԱՐԵԱՆ

ԹԻՒԾ, ՈՐՊԵՍ ՔԱՆԱԿ՝ ՇԱՐՈՒ-  
ՆԱԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ Է:

ՓՈՔՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԸ ԳՈՅԱ-  
ՏԵՒՈՒՄԸ ՆԱԽ ԵՒ ԱՌԱՋ ԹԻՒԻ ՀԱՐՑ  
Է.

ԹԻՒԾ ՆԱԵՒ ԾՆՈՒՑԻՉ Է ՈՐԱԿԻ.  
ՊԵՏք Է ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ՝  
ՈՐԱԿ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ:

ԹՌՈՒԱՔԱՆԱԿ

## **ԸՆԺԱՅԱԿԱՆ**

«Թուաքանակ» հետազօտութիւնը  
կը ձօնեմ

Մեծ Եղեռնի նահատակներուն,  
որոնց կորուստը եղաւ նաև կորուստը  
Հայ Հողի,  
Հայ Մշակոյթի,  
Հայ Ռազի և  
մանաւանդ Թիհ-ի:

**Մ.Մ.**

## I- ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՒ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

### **Ժողովրդագրութիւնը (Demography)**

Այս ընկերացին գիտութիւն է, որ կ'ուսումնասիրէ մարդկային բնակչութիւններու կառողքը (անոնց բաշխումը ըստ տարիքի, սեռի, ընտանելիքան վիճակի, ևալն), և անոնց զանազան երևոյթները (ծնունդ, մահ, գաղյթ, ևալն): Ժողովրդագրութիւնը կ'ենթադրէ վիճակագրական չափումներ և ուսողական (mathematical) մեթոդներ:

Իր էոթեամբ իսկ՝ ժողովրդագրութիւնը կապուած է զանազան քաղաքական, ընկերացին և կենսաբանական գիտութիւններու մատակարարած վիճակագրական տեղեկութիւններուն, և մարդահամարներու արդինքներուն:

Ժողովրդագրութիւնը հետաքրքրող խնդիրներն են.-

ա.- Բնակչութեան թուային փոփոխութիւնները (յաւելում, նուազում)։

բ.- Բնակչութեան կազմը.

գ.- Բնակչութեան սփոռումը՝ ըստ վայրի.

դ.- Նախորդ երեք մարզերուն մէջ տեղի ունեցող փոփոխութիւններուն յարաբերութիւնը իրարու հետ։

ե.- Պատճառները այս փոփոխութիւններուն։

զ.- Մշակումը տեսութիւններու շարքի մը՝ բացատրելու համար երևոյթները՝ զանոնք ներկայացնելով տախտակներու և բաղդատութիւններու միջոցով։

է.- Կատարումը նախատեսութիւններու բնակչութիւններու մասին՝ տնտեսական և ընկերացին ծրագրում կարելի դարձնելու համար։

## II- ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉԱՅԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

### A.- ՄՈՒՏՔ

Վերջին 300 տարիներուն զգալիօրէն աճած է մարդկութեան թիւը: Այդ աճը սաստկացած է մեծ չափով վերջին 50 տարիներուն:

Աշխարհի բնակչութիւնը, եթէ իր վիճակին ձգոյի առանց հակաշխոի, կը կրկնապատկուի իրաքանչիւր 25 տարին անգամ մը:

Բնակչութեան գերաճը հիմնական մտահոգութիւններէն մէկն է աշխարհի. յաջորդ 25 տարիներուն այդ աճը պիտի ունենայ աւելի հեռահաս ազդեցութիւններ մարդկութեան կեանքին վրայ. տնտեսական և ընկերապին հարցերը, որոնք սերտ կապ ունին թուաքանակին նետ, խոր փոփոխութեան պիտի ենթարկուին:

### B.- ԲՆԱԿՉԱՅԻՆ ՏԱԳՆՍՊԸ

Ահա՝ հինգ գլխաւոր հարցերը այդ տագնապին..-

ա.- Թուապին աճը.

բ.- Բնակչային կուտակումը քաղաքներուն մէջ.

գ.- Գաւառին բնակչազրկումը.

դ.- Տոհմապին-ցեղապին փոքրամասնութիւններու պատշաճումի աստիճանին անբաւարարութիւնը.

ե.- Ընտրածնումի խնդիրը (the eugenic problem, որ մարմնապէս և միտքով քաշառող զաւակներու ծնունդը ապահովելն է):

Բնակչային գերաճին կապակցութեամբ կան երեք գլխաւոր մտածելակերպեր.-

ա.- Մալթիսի տեսակետը.

բ.- Քարլ Մարքսի մօտեցումը.

գ.- Արդի արևմտեանը:

### 1.- Մալթիսի տեսակետը

Մալթիսի տեսակետը (1789)` կարիքի, պատերազմներու և ընկերապին դժբախտութիւններու ծագումը կը տեսնէ բնակչութիւններու թիւին և անոնց արտադրամիջոցներուն մարդկապին փոխյարաբերութեան մէջ:

Ըստ Մալթիսին՝ ժողովուրդին թուապին աճումը կ'ընթանայ

Երկրաչափական յառաջատութեամբ (քազմապատկեմով), իսկ սևունի աճուրմ՝ թուաբանական (գումարումով). որեմն, պատերազմ, սով, համաճարակներ, վաղահաս մահ և այլ աղէտներ՝ միջոցներ են գերածի հարցը մեղմելու:

## 2.- Մարքսի տեսակետը

Մարքսի հետևողաբները շենչը կը դնեն սննդամիթերու բաշխումին վրայ: Հաս անոնց, եթէ սնունդի աղբիւրները օգտագործուին ճիշդ ձևով, և բաշխումը կատարուէր արդարօրէն՝ ամբողջ մարդկութիւնը կրնար ապրիլ գոյութիւն ունեցող սննդելէնով: Հաս անոնց՝ բնակչային բոլոր խնդիրները այսոի անհետանային համազնավարական արտադրողական դրութեան մը տակ. ծնունդներու սակը հեթանորաբար այսոի հուազէր՝ կենսամակարդակի բարձրացումին և երախաներու աշխատանքին նուազումին պատճառով: Բաց պարզուեցաւ որ այս նախատեսութիւնները իրականութիւն ուղարկէ աւելի՝ համարտը ու փափա՛ք էին:

### **3.- Արդի արևմտեան տեսակէտը**

Այս տեսակէտը տակալին չէ զգեցած վերջնական ձև մը. Արևմուտքի ժողովրդագիրները կը գտնուին որոնումի փուլին մէջ: Անոնք չեն խորհիր որ Թիւ-ը առանձինն բռն հարցն է, այլ թիւ-ին կը կապէն որիշ պատճառներ ալ, ինչպէս քաղաքականը, տնտեսականը, ևայլն:

#### **Գ.՝ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԹՈՒԱՅԻՆ ԱՃԸ**

Բնակչութեան աճը (այդ աճին համեմատութիւնը) հիմնական ազդակ մըն է, որովհետև փոփոխութիւններ կը յառաջացնէ նաև բնակչութեան ԿԱԶՄ-էն ներս: Նկատելով որ ընկերութեան մը բոլոր հասուածները աղյօն համեմատութեամբ չեն աճի՞՝ թիւը կը բերէ նաև ընդհանուր հաւասարակշուութեան խախտում:

Յատկանշական երևողթեներ կը պարզէ աշխարհի բնակչութեան աճի համեմատութիւնը: 1965-ին աշխարհի բնակչութեան թիւն էր 3.3 միլիար, որուն վրայ տարեկան աւելցուծ է 62-էն 63 միլիոն հոգի, օրուկան՝ 170,000-էն 172,000 ան:


Ծնունդներու համեմատական աճը եղած է ցա՛ծ՝ յառաջացեալ երկիրներու մէջ (Հիսոսապին Ամերիկա, Եւրոպա, Ասիսկին Խորհրդապին Մ'իութիւն, Ովկիանիա). Եղած է բարձր՝ Ասիոյ, Ափրիկէի, Կեդրոնական Ամերիկապի, Հարաւային Ամերիկայի մէջ:

1965-Էն ասդին երկրաբող շրջանին՝ աճը տեղի ունեցած է այնքան արագ, որ մարդկութեան թիւը 2000 թուականին պիտի բլլազ 6.3 միլիար:

Այս ընթացքով, 2025 թուականին աշխարհի բնակչութիւնը անգա՞մ մը ևս պիտի կրկնապատկուի և հասնի 16.6 միլիարդի:

Ծնունդներու և մահերու միջև համեմատութիւնը կը կոչուի «Բնական Աճում»: «Գաղթաճում» կը կոչուի համեմատութիւնը ներգաղթին և արտագաղթին միջև: Ուրեմն՝ երկու կերպերով է որ կը փոխուի բնակչութիւնը, – Մերնուագործումով և Գաղթով:

Հետևեալ տախտակը ցոյց կու տայ մարդկութեան աճին պատկերը՝ սկսած մէկուկէս միլիոն տարի առաջ և երկարող մինչև ներկան: Աճումին խոշորագոյն մասը տեղի ունեցած է վերջին 300 տարիներուն:



Կողքի էջով՝ երկու տախտակ, մէկը ցոյց տուող աշխարհի բնակչութեան աճը Բ. Համաշխարհային Պատերազմէն ետք, միւսը՝ տարեկան աճին համեմատութիւնը:-

**Աշխարհի բնակչութեան տարեկան աճը Բ. Պատերազմէն  
ետք տոկոսներով**

Ծրշան	1950-61	1960-66
Բովանդակ աշխարհ	1.8	1.9
Ավրիլէ	2.1	2.3
Մ. Նահանգներ և Գանատա		1.8 1.5
Լատին Ամերիկա	2.8	2.8
Հարաւային Ասիա	2.2	2.5
Արևելեան Ասիա	2.0	1.4
Եւրոպա	0.8	0.9
Ովկիանիա	2.5	2.1
Խորհրդային Միութիւն	1.7	1.4

**Աշխարհի բնակչութեան տարեկան աճին  
համեմատութիւնը տոկոսներով**

Ծրշան	1965-70	1970-75	1975-80
Բովանդակ աշխարհ	2.0	2.0	2.0
Ավրիլէ	2.6	2.8	2.9
Մ. Նահանգներ և Գանատա		1.2 1.3	
1.4			
Լատին Ամերիկա	2.8	2.9	2.9
Հարաւային Ասիա	2.8	2.8	2.7
Արևելեան Ասիա	1.8	1.7	1.6
Եւրոպա	0.8	0.7	0.7
Ովկիանիա	2.0	2.1	2.2
Խորհրդային Միութիւն	1.0	1.0	1.1

**Աղյուսակ Ազգերու Կազմակերպութեան Տնտեսական և Հնկա-  
ռային Խորհուրդ, Բնակչութեան Ցանձնաժողով, Աշխարհի Բնակչութեան  
Կացութիւնը (E/CN.9/231) (Ժըն, 1969), էջ 119:**

Ծննդաբերութիւններու վրայ հակակշիռը քաաներորդ դարու ամէնէն հրատապ հարցերէն մէկն է, որովհետև մարդկութեան գերաճը զապելու համար գործածելի միջոցներուն մէջ ամէնէն ձեռնոտուն կը թոփի ըլլալ, ամէնէն շօշափելին:

Ի՞նչ կ'ուզեն՝ ըսե՛ն, և ի՞նչ պատճառաբանութիւն ալ յառաջ քշեն եկեղեցիներն ու այլազան խոմբեր՝ իրականութենէն խոսափում չկա՛յ.՝ Պէտք է ՀԿԱԿՇՈՒՈՒ ՄԱՐԴԿԱԽԹԵԱՆ ԹՈՒԱՅԻՆ ԱԺԲ:

**Դ.- ԲԱԶՄԱԾՆՈՒԽԹԻՒՆԸ**

Հետաքրքրական է 1971-ին Լիբանանի մէջ պատրաստուած հետևեալ տախտակը: Ան ցոյց կու տայ տարիքն ու կրօնքը ա'յդ տարի զաւակ ունեցող լիբանանցի կիներուն:

Կիներու տարիք	Քրիստոնեաներ	Իւլամներ
15-19	0.6	1.2
20-24	1,5	2.2
25-29	2.5	3.8
30-34	3.8	5.4
35-39	4.3	6.5
40-44	4.8	7.1
45-49	5.2	7.7
Գումար	3.8	5.1

Այս տախտակին մէջ պարզուող պատկերը չափազանց խօսուն է:- Իւլամ կիները կ'ամուսնանան աւելի փոքր տարիքի, և աւելի բազմածին են՝ ճյջիսկ լիբանանի նման արևմտականացած երկրի մը մէջ:

Բազմածնութեան առընչութեամբ յատկանշական է պատկերը, որ կը պարզուի հետևեալ վիճակագրական երկու տախտակներէն:-

**Բազմածնութեան համեմատութիւնը, ըստ շրջաններու,  
Խորհրդային Միութեան մէջ**

	բնակչթ. տոկոս	ծնունդներու տոկոս, 1973	ծնունդներու տարբերութիւն ըստ երկրի
Պալթիք (լաթվիացի, լիթովնիացի, էստոնիացի)	3	15.1	13.9-16.0
Արևմտեան (ռուս, ռքրանիացի, պելոռոս, մոլտավիացի)	79	15.2	14.9-30.4
Կովկասեան (վրացի, հայ, ազերի)	5	22.2	18.2-25.4
Սահական (տաճիկ, թուրքմէն, իւզաք, քիրղիզ, դագակ)	13	29.4	23.2-35.6

**Աղբիու- ՄԱԿ, Տնտեսական և ՀԱկերային Խորհուրդ, «Յետ-Պատերազմ-եան Ժողովրդագրական Միութեան և Նախատեսութիւն Մինչև 2000 թուական», պատրաստուած 1975-ի Յուլիսին՝ Եւրոպայի Տնտեսական Ցանձնաժողովի Քարտողարութեան կողմէ:**

**ՆՇԵԼԻ ԿԵՏԵՐ.-**

ա.- Ասիական շրջանին բնակչութիւնը իւլամ է և ունի բարձրագոյն սակը ծնունդներու.

բ.- Կովկասեան շրջանը, որ ունի երկրորդ բարձրագոյն սակը, իր մէջ կը հաշուէ իւլամ Աստրականան ու այլ իւլամ հաւաքականութիւններ:

**Հրեայ և արաբ ծնունդներ Խարայելի մէջ**

Աերնդագործութեան ընդհ. տոկոս (1966)	ծնունդներու տոկոս (1970)	բնական աճի տոկոս (1970)
Արաբներ	4.00	45.6
Հրեաներ	16.5	24.2
Երոպածին	1.19	
Խարայելածին	1.35	
Ափրիլկասիածին	2.17	

**Աղբիւր.-** Սերնդագործութեան ընդհանուր տոկոս Տուզ Ֆրիտլանսովոյի «Խսուայէլ» գիրքէն, Պետնարս Պերըլսընի խմբագրած «Բնակչային Քաղաքականութիւն Զարգացած Երկիրներու Մէջ» գիրքէն (Նիւ Եռոք, 1974):

**ՆՇԵԼԻ ԿԵՏԵՐ.-**

ա.- Խալամներու աճումի սակը կրկինն է հրեաներու սակին՝ Խարայելի մէջ. և այդ սակերուն համեմատութիւնը մնացած է նոյնը:

բ.- Վիճակագրութիւնը կը վերաբերի 1966-1970 տարիներուն:

Կանոնաւոր յաւելումի բացառիկ պարագայ մըն է Պոլսոյ բնակչութեան թուային աճը վերջին 150 տարիներուն: Այսօր շուրջ ինը միլիոն բնակիչ հաշուող Պոլսոյ բնակչութեան կազմը հետևեալ էր 1849-ին՝ ըստ Almanach de L'Empire Ottoman-ին..-

Պոլսոյ և շրջակայից բնակչութիւն	բնակչութիւն/անորոշ	Ծնուանիք կազմած		Ծնդհանուր թուահամար սեռերու
		այր	կին	
օսմանա- նիական	ստրուկներ	-	5,000	47,000
	իսլամներ	68,000	139,000	141,000 } 400,000
	հայեր (առաքել.)	16,000	93,400	95,600 205,000
	հայեր (ոչ-առաք.)	-	8,420	8,580 17,000
	յոյներ	33,000	50,000	54,000 137,000
	հրեաներ	-	10,800	13,200 24,000
օտարահպատակ		6,000	3,960	4,040 14,000
		123,000	310,580	363,420 797,000

Ուրիշ կարևոր տախատակ մը.-

**Հայերու և թուրքերու ընդհանուր թուաքանակը աշխարհի  
վրայ**

տարեթիւ	հայեր	թուրքեր
1926-27	2,900,000	13,648,000
1966	5,000,000	31,391,000
1970	5,309,000	35,666,000
1985-87	5,450,000	40,347,719

ԵՐԿՈՒ ՏԱԽՏԱԿՆԵՐՈՒԻՆ ՎԵՐԱԲԵՐԵՍԱԼ ՆՇԵԼԻ ԿԵՏԵՐ--

1.- ԽԱԼԱՄԱՆԵՐԸ (թուրքեր և 52,000 գերիներ) միայն կէսն են քաղաքին բնակչութեան (գերիներէն 47,000-ը կին է)։

2.- Հայերը աւելի քան քառորդն են (երկու թուրքի դէմ մէկ հայ)։

3.- 150 տարի ետք, հայերուն թիւը 220,000-էն իշած է 30,000-ի, որ հաւանական թիւն է այսօրուան պղասահայութեան։

4.- Ցոյներուն թիւը 137,000-էն իշած է (հաւանաբար) 25,000-ի։

5.- Թուրքերուն թիւը 400,000-էն բարձրացած է շուրջ 7 միլիոնի: Այսօր Պոլիար բացառաբար թուրքերէ բնակուած քաղաք մըն է։

6.- Աւելի՞՛ ներկայիս Թուրքիոյ բնակչութիւնը անցած է 40 միլիոնի սահմանը՝ իր մէջ հաշուելով 30 միլիոնէ աւելի թուրք:

Բացայաց է որ թուրք իշխանութիւնները ծրագրուած աշխատանք յառաջ տարած են իրենց թիւը աճեցնելու ուղղութեամբ, իսկ մենք ոչինչ ըրած ենք. ո՞՛ մէկ հետևողական ճիգ ի գործ դրած ենք Սկիտքի և Հայաստանի մէջ, մինչ ամէնօրեայ մտահոգութիւն ու պայքա՞ր պէտք է ըլլայ Թիի-ը, և գլխաւոր մտասնեռում՝ անոր աճումը, աշխարհիկ թէ հոգնոր ղեկավարութեան համար:

Թուային յաւելումի ուրիշ ուշագրաւ օրինակ մըն է Քեպէքը: 18-րդ դարու կէսերուն, Քեպէքի մէջ կար 65,000 ֆրանսախօս՝ երբ անգլիացիները գրաւեցին «Նոր Ֆրանսա»ն և ամէն միջոցի դիմեցին իրենց լեզուն և մշակոյթը պարտադրելու համար անոր: Բայց ձախողեցան, որովհետև ֆրանսախօս կղերականութիւնը, ի շարս ուրիշ միջոցառումներով՝ հրահրեց ժողովուրդը դէպի բազմածնութիւն: Այսօր 6,500,000-ի կը հասնի Քեպէքի ֆրանսախօս բնակչութիւնը:

Հայոց Հայաստանի մեջ եղած է բազմածին հւքսսբերսաբար, բնագդով, հաւանաբար հակագդելու համար շարդերուն և արտագաղթին պարտադրած շարունակական կորուստներուն։ Բայց որքա՞ն ալ բազմածին՝ չե՛ կրցած պահել թուային աճի տևական յաւելումը, որ անհրաժեշտ է ԱՌՈՂՋ ՈՒ ՈՂՋ ժողովորդի մը համար՝ բնականոն շարունակականութեան մը պահպանումին տեսակետէն։<sup>1</sup>

---

1 Մեր ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԻ ԱՌԱՋԱՐԿԱՆԵՐ շարքին հասորներէն ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ-ի մէջ, յենելով մեր հաշուումներուն վրայ, գտած ենք որ մեր չափը ունեցող ժողովորդի մը պարագային նուազագոյն անհրաժեշտ թիւը առողջ գոյատևումի համար՝ ԵՕԹԸ ՄԻԼԻՌՆ է։

### III- ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Սկիւռքը չէ ոնեցած մարդահամար, ո՞չ ալ վիճակագրութիւններու դրութիւն:

Այս կապակցութեամբ գնահատելի երևյթ է Ահարոն Ահարոնեանին «Խառն Ամուսնութիւնները Եւ Ամերիկահայ Համայնքը» հաստորը, տպուած 1983-ին:

Ահարոն Ահարոննեանը ուսումնասիրած է Նիւ Ինկենսի շրջանի Էջմիածնական թեմին պատկանող 8-9 եկեղեցիներու սովորները՝ 1950-էն 1976 թուականը երկարող 27 տարիներուն տեղի ոնեցած խառն ամուսնութիւններուն առընչութեամբ: Իր գործը արժանի է լուրջ մօտեցումի:

### Ա.- ԽԱՌՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երբ նկատի ունինք սովորական պատմականութիւնները՝ պէտք է կարևորութեամբ քննենք նաև ամուսնութիւններու (իրարու, կամ օտարներու հետ), և գաղղի (ներգաղջ կամ արտագաղջ) պարագաները: Տոհմալեզուային փոքրամասնութիւնները կ'աճին շնորհին ծնունդներուն, ներ-ամուսնութիւններուն և ներգաղջին. կը կորսնցնեն իրենց թիւն՝ մահներու, օտար ամուսնութիւններու և արտագաղջի հետևանքրով:

Այլասերումի գլխաւոր ազդակներէն մէկն է խառն ամուսնութիւնը (ամուսնութիւնը օտարներու հետ): Դժբախտաբար, մեր եկեղեցիները չեն ունեցած սովորութիւնը վիճակագրութիւններ պատրաստելու, և որեւմն՝ խառն ամուսնութիւններու իրական թիւը որոշ շելը միշտ եղած է շատ դժուար, գրեթէ անկարելի:

Տալէ առաջ Ահարոննեանի կազմած վիճակագրական տախտակներուն եզրակացութիւննը՝ ընենք կարգ մը նշումներ.-

1.- Քննութեան առարկայ եկեղեցիները կը գտնուին Միացեալ Նահանգներու արևելեան ափը, որ նորեկներու թիւը համեմատաբար շատ նուազ է:

2.- Քննուող եկեղեցիներու կը պատկանին Էջմիածնական թեմին, որուն անդամները, սովորաբար, աւելի ամերիկանացած են:

3.- Խառն ամուսնութիւններու սակը նոյնիսկ արևմտեան ափի

«տաք» համայնքներուն մէջ, որ գերակշիռ է թիւը նորեկներուն, կարծուածէն շա'ն աւելի է, և կ'աճի շարունակաբար:

4.- Պրճ. Ահարոննեանի վիճակագրական տախտակները կ'երկարին մինչև 1976 միայն, թուական՝ որմէ եւոք կարևոր փոփոխութիւններ տեղի ունեցան:

5.- Այս տախտակները կը վերաբերին միայն ա՛յն ամուսնութիւններուն, որոնք կատարուած են հայկական եկեղեցիներուն մէջ, մինչ անհամեմատօրէն աւելի մեծ ըլլալու է թիւը ոչ-հայ եկեղեցիներու մէջ կատարուած պասկներուն:

6.- Ազգային գոյատևումի տեսակետէն հարց է թէ որքանո՞վ հայ-ութեան ցուցանիշ է հայկական եկեղեցին մէջ պատկուիլը. իսկ բուն հարցը այն է թէ՝ այս եկեղեցիները իրենց որքանո՞վ հայ են:

7.- Բազմաթիւ գոյգեր կ'ամուսնանան հայկական եկեղեցին մէջ պարզապէս որովհետև իրենց ծնողները պատկանած են այդ եկեղեցին:

Հիմա ներկայացնենք կարգ մը եզրակացութիւններ, որոնց հասած է Պրճ. Ահարոննեանը<sup>1</sup>.

ա.- Այս ընթացքով՝ երկու կարելիութիւն կը պարզուի հայկական համայնքներու առջև,- ամբողջովին ձուլուիլ, կամ վերածուիլ անձերու, որոնք մարմնապէս և մշակոյթով տարրեր են հայու այն տիպարէն, որ ընդհանրապէս ունինք ի մտի:

բ.- Թերևս արդէն կը գտնուինք օտարացումի սկզբնական այն փուլին մէջ, որ կը գտնուէր Լեռնատանի հայ գաղութը՝ վերջնական անկումի շրջանէն անմիջապէս առաջ:

գ.- Խառն ամուսնութիւններուն համեմատութիւնն է՝ նուազագյու 90 առ 100. սակ մը՝ որ աղիտալի է:

դ.- Ամուսնութիւններու տարեկան սուկական թիւը նուազած է 54 առ 100 համեմատութեամբ: Օրինակ, 1950-ին կնքուած են 136 ամուսնութիւններ, իսկ 1976-ին՝ միայն 62: Պատճառնե՞րը,- հեռացում հայկական եկեղեցիներէն, ծնունդներու թիւի նուազում, ևայլն:

ե.- 90 առ 100 անկում տեղի ունեցած է ներամուսնութիւններու (հայ հայու հետ) սակին մէջ: 1950-ական թուականներուն ներամուսնութիւններուն թիւը եղած է 124՝ 91 առ 100-ը բոլոր ամուսնութիւններուն. 1976-ին այս 124-ը իշած է 12-ի, որ միայն 19 առ 100-ն է ամուսնութիւններու լնդհանուր թիւին:

զ.- Հայերուն մօս խառն ամուսնութիւններու համեմատութիւնը բարձրագոյններէն է՝ բաղդատած որից փոքրամասնութիւններու հետ:

1 Aharon G. Aharonian, Intermarriage and the Armenian-American Community. Published by A. G. Aharonian (Shrewsbury, Mass., 1983).

## DIOCESAN NEW ENGLAND MARRIAGES EXCLUDING CONNECTICUT FROM 1950 - 1976 INCLUSIVE

YEAR	MARRIAGES		BOTH M/F		TOTAL		MIXED		MIXED	
	NUMBER		ARMENIAN		MIXED MARRIAGES		AM/NAF.		NAM/AF	
	No.	%	No.	%	No.	%	No.	%	No.	%
1950	136	124	91%	12	9%	5	4%	7	5%	
1951	128	100	78%	28	22%	14	11%	14	11%	
1952	130	97	75%	33	25%	16	12%	17	13%	
1953	106	80	75%	26	25%	9	9%	17	16%	
1954	115	83	72%	32	28%	14	12%	18	16%	
1955	106	75	71%	31	29%	18	17%	13	12%	
1956	106	78	74%	28	26%	14	13%	14	13%	
1957	112	78	70%	24	30%	12	10%	22	20%	
1958	90	62	69%	28	31%	13	14%	15	17%	
1959	72	47	65%	25	35%	11	15%	14	20%	
1960	72	48	66%	24	34%	12	17%	12	17%	
1961	77	43	56%	34	44%	20	26%	14	18%	
1962	68	42	62%	26	38%	9	13%	17	25%	
1963	72	42	58%	30	42%	18	25%	12	17%	
1964	69	42	61%	27	39%	11	16%	16	23%	
1965	48	24	50%	24	50%	12	25%	12	25%	
1966	47	24	51%	23	49%	10	21%	13	28%	
1967	56	29	52%	27	48%	17	30%	10	18%	
1968	76	32	42%	44	58%	19	25%	25	33%	
1969	53	23	43%	30	57%	17	32%	13	25%	
1970	66	19	29%	47	71%	25	38%	22	33%	
1971	62	20	32%	42	68%	20	33%	22	35%	
1972	77	25	32%	52	68%	22	29%	30	39%	
1973	72	17	24%	55	76%	19	26%	36	50%	
1974	65	23	35%	42	65%	13	18%	29	47%	
1975	56	14	25%	42	75%	11	20%	31	55%	
1976	62	12	19%	50	81%	19	31%	31	50%	
TOTALS	2199	1303	59%	896	41%	400	18%	496	23%	
1950-54	615	484	79%	131	21%	58	9%	73	12%	
1955-59	486	340	70%	146	30%	68	14%	78	16%	
1960-64	358	217	61%	141	39%	70	19%	71	20%	
1965-69	280	132	47%	148	53%	75	27%	73	26%	
1970-74	342	104	30%	238	70%	99	29%	139	41%	
1975-76	118	26	22%	92	78%	30	25%	62	53%	
TOTALS	2199	1303	59%	896	41%	400	18%	496	23%	

M/F = MALE/FEMALE

AM = ARMENIAN MALE

NAM = NON-ARMENIAN MALE

AF = ARMENIAN FEMALE

NAF = NON-ARMENIAN FEMALE

## Բ.՝ ՀԱՅ-ՌԻԹԻՒՆԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՈՒԵԱԼ

Ինչպէս ալ սահմանենք ՀԱՅ-ՌԻԹԻՒՆԸ (հայ ըլլալը)<sup>1</sup> գոյութիւն ունենալու են հայ-ՌԻԹԵԱՆ աստիճաններ, որակային ու տեսակային տարրերութիւններ:

Այս առումով կարելի է համաքականութիւն մը բաժնել 5-ի.-  
ա.- Ծեշտեալ յանձնառութիւն մը ունեցող անձեր.

բ.- «Որոշ» յանձնառութեամբ անձեր.

գ.- Միջին դիրք գրաւող անձեր.

դ.- «Ազգային դուռ» յանձնառութիւն մը գտնուող անձեր.

ե.- Ազգային դուռէն դուրս ելած անձեր:

Կան անձեր, որոնց համար «Հայ» է ա'ն, որ պարզապէս կը յայտարարէ թէ հայ է ինք»: Հայ-ՌԻԹԻՒՆԸ դադրելու սկած է ազգային որակ ու տեսակ ըլլալէ. սկած է ՊԻՏԱԿ ըլլալու:

Արդ, ո՞վ պէտք է «հայ» նկատել, և ի՞նչ չափանիշներով մարդահամար կատարել: Առանց չափանիշի՝ չկայ բնորոշում, և առանց բնորոշումի՝ չափելու կարելիութիւն: ՀԱՅ ըլլալը տեսակի և որակի հարց է: Հայ-ՌԻԹԻՒՆԸ՝ ազգային ժառանգութեան թէ՝ պաշտպանութիւնն է, թէ՝ գոյատումը, և թէ՝ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ սերունդէ սերունդ: Սերունդի մը Հայ-ՌԻԹԵԱՆ աստիճանը կախեալ է՝ յաջորդ սերունդին իր փոխանցել կրցած ազգային ժառանգութեան չափէն ու որակէն:

## Գ.՝ ԳԱՂԹ ԵՒ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ

### ա.- Գաղթ


Երկու գլխաւորագոյն ազդակներ են ԳԱՂԹ-ը և ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԵՐ-ը՝ թիվի և թուային որակի տեսակնետներ:

Օրինակ, Սփիտոքի մէջ, արտագաղթի պատճառով համայնքներ մետնելու վրայ են, մինչ որիշներ կը վերակենդանանան ներգաղթի հետևանքով: Գաղթը հիմնովին փոխած է Սփիտոքի ժողովրդագրական պատկերը, և համայնքներուն հարցերն ու դժուարութիւններուն տեսակը:

Գաղթի կապակցութեամբ՝ ուշադրութեան արժանի է մանաւանդ արտագաղթը Հայաստանն ու Ամերիկա, և յատկապէս Միացեալ Նահանգներ: Անկախ որպէս ազգային երևոյթ իր ունեցած անպատեհութիւններէն՝ այս արտագաղթը ստեղծած է նոր բարդութիւններ ամերիկահայ գաղութէն ներս, սրուած ըլլալով որ զուգադիպած է Մերձաւոր Արևելքն ևս դէպի Ամերիկա կատարուող արտագաղթին: Հայաստանահայը, պսուո՞ւ ամբողջովին տարրեր իրաւակարգի մը, և մերձաւոր արևելքցի հայը՝ արմատապէս տարրեր ամերիկածին հայէն, չէին կրնար հեշտօրէն միաձուլուի թէ՝ իրարու հետ, և թէ՝ համայնքին միւս հատուածներուն:

Սոորու տախտակ մը որ ցոյց կու տայ թուային պատկերը

Հայաստանին դեպի Միացեալ Նահանգներ կատարուած արտագաղթին՝ 1975-էն մինչև 1988.-



### Բ-Ա Ամուսնութիւն

Ամուսնութիւնները, - ներամուսնութիւն թէ օտարի հետ, - հիմնական ժողովրդագրական նշանակութիւն ունեցող խնդիր են՝ կապուած մեր թիւն և որակին: Այս կապակցութեամբ մանաւան՝ պէտք է զգուշանանք օգտագործելէ օրինակը հրեաներուն: Անոնց պարագային, օտար ամուսնութիւններն անգամ, յաճախ, ի նապատ իրենց են ա'յն իմաստով որ սովորաբար օտար կողակիցը (և կողակցութին) կը դառնան հրեայ, մինչ մեր պարագային՝ օտար ամուսնութիւնը անխոսափելի օտարացում է միշտ՝ եթէ ո՞չ անմիջապէս, բայց ապահովաբար շուտով:

Արդ, երբ կը մտածենք որ ներկային օտար ամուսնութիւններու ընդհանուր համեմատութիւնը, ըստ անպաշտօն հաշուումներու, շուրջ 75-էն 80 առ 100 է՝ դժուար չէ կուանելը թէ ինչպիսի՝ խորունկ

անդունդի մը եզերքին հասած ենք արդէն Ամերիկայի մէջ: Առանց ՀԱՅ ԸՆՏԱՍԻԹԻՒ գօդիշ ուժին՝ շիշումի դատապարտուած է ամէն ճիգ ու ծաղկումի կարելիութիւն:

## Դ.- ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

### Ա.- Մուտք

Ո՛չ միայն վիճակագրութիւն չենք պահեր, այլ նաև թիւնը «կը ստեղծենք», ու կը կրկնենք զանոնք մինչև որ ընդունուին որպէս հաւասար՝ տուեալներ մեր մամոլին, ճառախօսներուն և ղեկավարներուն կրղմէ:

Ստորև՝ ըստ 1986-ի քանատական մարդահամարին՝ հայերուն թիւը ցոյց տուող վիճակագրական ծանօթութիւնները: Այդ պաշտօնական թիւնը, անշուշտ, հարիտ տոկոսով ճշգրիտ կրնան չըլլալ, բայց կարելի մօտաւորագոյնն են ճշգրիտ թիւնին:

Ցատկանշականը հետևեալն է, - համաձայն մարդահամարին, հայութեան (խառն թէ զուտ) թիւը 27,390 է, մինչ «ըստ հայ զանազան կազմակերպութեանց՝ Քանատապի հայերուն թիւը կը տարութերի 40-65 հազարի միջն»։ կրկնը՝ մարդահամարի թիւնին:

Ընդհանուր պատկերը նոյնն է նաև բոլոր գաղութներուն պարագային: Թիւրը ԽՈՇՈՅՑՈՒԱԾ ԵՆ ՄԻՇՏ. երբեմն՝ անտրամաբանական ըլլալու աստիճան: Օրինակ, 1987-ին հրատարակուած «Հայաստանի Պատմական Ատլաս» գիրքին համաձայն՝ Լիբանանի հայութեան թիւն է 200,000, Սուրիոյ հայութեանը՝ 100,000, Ֆրանսապի հայութեանը՝ 300,000, Քանատապինը՝ 50,000, Իրանինը՝ 200,000, ևայլն. թիւնը՝ որոնք երևակայական են և ՓԱՓԱՔԱԾԻՆ....:

### Բ.- Վիճակագրութեան մը առընչութեամբ

Մեր ուսումնասիրութեան այս կէտին՝ ներկայացնենք վեց տախտակներ՝ ֆրանսահայութեան պատկերը պարզել փորձող: Անոնց հեղինակը կատարած է օգտակար աշխատանք մը՝ թէն շատ մասնակի: Քննելէ ետք այդ տախտակները, կ'արժէ «գուշակութիւն» մը ընել թէ ի՞նչ է ֆրանսահայութեան իրական ՈՐԱԿԱՅԻՆ թիւը ներկայիս: Կը թուի որ ֆրանսահայութեան իրական թիւը շատ հեռու է 300,000 ըլլալէ. գաղութ մը, որ իր ամբողջ կեանքին ընթացքին (1920-1990) ունեցած է միայն 2 կամ 3 հայկական փոքր դպրոց՝ ի՞նչպէս կրնայ 300,000 անդամ հաշուել....: Անկարելի չէ՝ որ հայկական ծագում ունեցող 300,000 ֆրանսացիներ գտնուին ֆրանսա, բայց անկարելի՝ է որ ֆրանսաՀԱՅԵՐՈՒ թիւը 100,000-էն աւելի ըլլայ ներկայիս:

Ո՞վ որ ՁԵ՛ ԱՆՑԱԾ ՀԱՅԱՑՈՒՄԻ ԲՈՎԵՆ՝ Ի՞ՆՉ ՊԱՏԺԱՌ ԿԱՅ  
ՈՐ ՀԱՅ ԸԼԱՅ...:

• • •

Ֆրանսահայ աւետարանական հովի մը՝ Ողջէ Լուսնեան, հրատարակած է ուսումնասիրութիւն մը ֆրանսահայ գաղութին մասին։ Գիրքը կը պարունակէ վիճակագրութիւններ, որոնց առաջադրանքն է ստոգել ֆրանսահայ գաղութին հայ-ութեան աստիճանը։

Ստորև ներկայացնող 6 տախտակներուն քննութենէն պարզուղ պատկերը կը վերաբերի ֆրանսահայութեան շա'տ փոքր և շա'տ մասնաւոր մէկ հաստուածին։ և ատիկս այն հաստուածն է, որ կազմուած է առաւելաբար դեռ «հայ» մնացած բոլորքական ֆրանսահայերէ։

Ամէն պարագայի, իրենց ներկայ վիճակին մէջ իսկ, այդ տախտակները յատակօրէն մատնացոյց կ'ընեն տիրող աղիտալի վիճակը ֆրանսահայութեան։

### ՈՐՈՌԻ ՀԵՏ ԿԲ ՓԱՓԱՔԻՍ ԱՄՈՒՆԱՆԱԼ

Ազգութիւն	Ա. սերունդ(%)	Բ. Սերունդ(%)	Գ. սերունդ(%)
Հայու մը հետ	93.3	80	60
Տարբերութիւն չ'ըներ	6.6	15	36
Չեմ գիտեր	--	5	4

• • •

Կրօնք	Ա. սերունդ(%)	Բ. Սերունդ(%)	Գ. սերունդ(%)
Բոլորքականի հետ	63.3	50	68
Հաւատացեալի հետ	6.6	40	16
Տարբերութիւն չ'ըներ	23.3	10	16

### ՈՐՈՌԻ ՀԵՏ ԱՄՈՒՆԱՑԱԾ ԵՍ

	Ա. սերունդ(%)	Բ. Սերունդ(%)
Հայ բոլորքականի հետ	46.6	50
Հայ առաքելականի հետ	46.6	20
Ֆրանսացի կաթոլիկէի հետ	3.3	15
Ամուրի եմ	----	15

**ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹ - ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԳ ՈՒ ՊԱՐ**

	Ա. սերունդ(%)	Բ. Սերունդ(%)	Գ. սերունդ(%)
Գիտեմ երգերը	50	55	36
Գիտեմ պարերը	20	45	56

**ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹ - ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ**

	Ա. սերունդ(%)	Բ. Սերունդ(%)	Գ. սերունդ(%)
Գիտեմ՝			
5 հեղինակ	23.3	45	8
4 հեղինակ	3.3	10	—
3 հեղինակ	6.6	15	12
2 հեղինակ	46.6	5	24
1 հեղինակ	20.0	25	36
0 հեղինակ	—	—	20

**ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ**

	Ա. սերունդ(%)	Բ. Սերունդ(%)	Գ. սերունդ(%)
Հայ ըլլալդ անհանգիստ կ'ընէ՞ քեզ - ՈՉ	100	100	88
Աւելի հայ՞ կը գգաս թէ ֆրանսացի - Աւելի հայ - Աւելի ֆրանսացի - Երկրքն ալ	88.6	45	16 28 56
Կը հասկնամ հայերէն Կը խօսիմ հայերէն Կը գրեմ հայերէն Կը գործածեմ հայերէնը բարեկամներու ընկերակցութեամբ եղուկու	100 100 90 43.3	100 100 65 50	60 56 16 28
Կը հաւճիմ հայկական երգեցողութիւնը (կրօն.)	100	100	72
Հայերէն կ'աղօթեմ	83.3	30	0
Երկու լեզուով կ'աղօթեմ	13.3	40	12
Հայերէն կը խորհիմ	76.6	5	0
Երկու լեզուով կը խորհիմ	20	60	12

#### **գ.- Ուրիշ վիճակագրութիւն մը**

Ստորև ներկայացնեաք ուսումնասիրութիւն մը՝ ստորագրուած Արմենակ Ռուսանեանին կողմէ, և լոյս տեսած «Լրաբեր Հասարակական Գիտութիւնների» պարբերականին 1985-ի Սեպտեմբերի համարին մէջ, թիւ 9, Երևան:

Բայց նախ կարգ մը մատնանշումներ.-

ա.- Ծառ մը թիւեր ունեցուած են (կամ 1985-էն ի վեր նուազած են առ հասարակ), բացի Հիսուսային Ամերիկայի և քանի մը փոքր նորակազմ գաղութներու թիւերէն: Օրինակ, Ֆրանսայի համար 350,000-ը չափազանցուած է, նոյնպէս՝ Թուրքիոյ 65,000-ը, Լիբանանի 250,000-ը, Սուրիոյ՝ 120,000-ը, Իրանի՝ 220,000-ը:

բ.- Սիիոնքի ընդհանուր թուաքանակը՝ 2,225,004, բնա՛ չի թուիր համապատասխանել իրականութեան: «Իրական» թիւը հաւանաբար 1,225,000 է:

Ամէն պարագայի, ուսումնասիրութիւնը կու տայ ընդհանուր գաղափար մը Սիիոնքի թուային պատկերին մասին: Բայց բուն խնդիրը այն է թէ փոքր հայութիւն ունեցող գաղութները արդէն սկսած են կորսնցնելու իրենց հնքնութիւնը. թիւին կարևորութիւնը զգալի է յատկապէս ան՛ց առընչութեամբ:

ԵԽՐՈՊԱ		ՈՒՄԱՆԻԱ	
Ալպանիա	180	Ֆրանսա	6,000
Անգլիա	17,000		350,000
Աւստրիա	4,000	<b>ԸՆԴՀԱՄԷՆԸ</b>	<b>446,015</b>
Պետքիա	5,000		
Պոլկարիա	25,000	<b>ԱՄԻԱ</b>	
Արևմտ. Գերմանիա	10,000	Արաբ Էմիրութիւններ	5,000
Արևել. Գերմանիա	40	Պանկլատէշ	100
Տանըմարք	100	Պորմա	10
Սպանիա	500	Եմէն	10
Իտալիա	1,000	Երուսաղէմ	600
Հոլանտա	3,000	Թուրքիա	65,000
Յունաստան	15,000	Ինտոմէզիա	100
Հունգարիա	1,000	Իսրայէլ	2,000
Լեհաստան	1,000	Իրան	220,000
Լիքսենզպորկ	15	Իրաք	20,000
Եռկոպանիա	50	Լիբանան	250,000
Մալթա	10	Կիպրոս	4,000
Մոնաքօ	50	Հարաւային Քորէա	4
Շուէտ	3,000	Հնդկաստան	1,000
Զուիցերիա	3,000	Հոնկ Քոնկ	50
Չեխովովարիա	50	Ցորդանան	4,000
Փորթուկալ	20	Ճավոն	100

Զինաստան	100	Սիերալյոնէ	10
Սէուտական Արարիա	8,000	Սուտան	1,000
Սինկավոր	1,000	Փղոսկրեալ ափ	30
Սուրիա	120,000	Քենիա	10
Թայուան	30		
Քուէյթ	11,000	<b>Ընդամենը՝</b>	<b>44,885</b>
Ֆիլիպին	100		
<b>Ընդամենը՝</b>	<b>712,204</b>	ԱՄԵՐԻԿԱ	
		Միացեալ Նահանգներ	
			800,000
ԱՓՐԻԿԵ		Արժանթին	85,000
Ալճերիա	20	Պրազիլ	20,000
Կանա	10	Քանատա	70,000
Եգիպտոս	12,000	Քուաֆա	100
Եթովպիա	1,000	Մեքսիկա	400
Զաիր	100	Զիլի	300
Զիմպապուէ	100	Վենեցիուելա	1,600
Թունիզ	25	Ուրուկուէ	14,000
Լիայիա	100		
Գոնկօ	100	<b>Ընդամենը՝</b>	<b>991,400</b>
Հարաւային Ավրիլէ	30,000		
Մատակասքար	60	ՌԱԿԻԱՆԻԱ	
Մարոք	200	Աւստրալիա	30,000
Նիկերիա	10	Նոր Զելանտա	500
Չատ	10		
Ծիպութի	100	<b>Ընդամենը՝</b>	<b>30,500</b>
<b>Ընդհանուր գումար՝</b>			<b>2,225,004</b>

### ՍՓԻԻՌՔԱՀՅՈՒԹԵԱՆ ԹԻՒԾ

#### Դ.՝ Թուային որակ

Իր հայրենիքն դուրս ապրող ժողովուրդի մը համար՝ Թիւ-ին ԱՐԺԵՔԸ ՍԵՐՏՈՐԷՆ ԿԱՊՈՒԱԾ է ԹԻՒԾ ԿԱԶՄՈՂ ԱՆՀԱՏՍԵՐՈՒՆ ՈՐԱԿԻՆ ՀԵՏ: Գաղթական ժողովուրդի մը գոյատևումը Թիւ-ի ՀԱՐՑ 2Է ՄԻԱՅՆ, այլ մանաւանդ ԱՅԴ ԹԻՒԻՆ ՈՐԱԿԻՆ ՀԱՐՑՆ Է:

#### Ե.՝ Թիւ և դպրոց

Վերջին հաշուով, գաղութի մը ապագան կախուած է, առաւելաբար, իր դպրոցներէն, անոնց որակէն, մակարդակէն, և հոն յաճախող աշակերտութեան թիւէն: Եթր կ'ուզենք չափել իր հապենիքն դուրս ապրող ազգային հաւաքականութեան մը ՈՒԺԸ՝ անոր ԱՊԱԳԱՌՆ է որ կը պարտինք չափել. ՆԵՐԿԱՆ այնքանո՞վ միայն կարևոր է՝ որքանով ան կը ՊԱՐՈՒԽԱԿԵ ԱՊԱԳԱՅԻՆ ՀՈՒՆՏԵՐԸ:

Համայնքի մը հայ վարժարաններուն աշակերտութեան թիւը չափանիշ ընդունելու սկզբնաքեն մեկնելով՝ եթէ փորձենք ճշդել, օրինակ, պղևահայութեան այժմու ԻՐԱԿԱՆ թիւը, կը պարզուի որ Թուրքիոյ հայութեան համար տրուած 65,000 թիւը չի' համապատասխաներ իրականութեան:

Ըստ Թուրքիոյ հայոց պատրիարքութեան 1987-ի օրացցին, պղևահայ 21 վարժարաններու աշակերտութեան ընդհանուր թիւն է 4,288: Ասոնց կողքին, «կարևոր թիւով հայ աշակերտներ ալ կը յաճախեն այտական և օտար վարժարաններ»:

Արդ, եթէ հաշուենք որ շուրջ 3,000 հայ աշակերտներ կը յաճախեն ոչ-հայկական վարժարաններ, ու նոյնիսկ եթէ այդ ոչ-հայկական վարժարաններ յաճախող աշակերտները նկատենք ՀԱՅ՝ պղևահայ աշակերտութեան ընդհանուր թիւը կը հասնի կլոր հաշուով 7,300-ի:<sup>1</sup> (Պետք է ենթադրել որ գաւառները հայկական դպրոցներ չկան, որեւմն հոն գտնուող հայութիւնը ազգային կազմակերպեալ համայնքներէ չէ բաղկացած): Ու եթէ այս 7,300 աշակերտներէն իրաքանչիւրը եկած նկատենք 4 հոգինոց ընտանիքներէ մը՝ պղևահայութեան թիւը կ'ըլլայ 29,200 և ո՛չ թէ 65,000:

#### գ.- «Ներքին Սփիտք»

Անշուշտ, կայ տակախն «Ներքին Սփիտք»ը, որուն թուային վիճակը և դպրոցներուն կացութիւնը շատ աւելի անմխթարական են՝ քան Սփիտքինը: Քայց այս մասին՝ աւելի ուշ:

#### Ե.- ԲԱԶՄԱԾՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԻՒ

Հիմա արտատպենք ծանօթ գրող, պատմաբան և հրապարակագիր Սիմոն Սիմոնեանին մէկ գրութենէն մասեր՝ առնելով Լու Անճելըսի «Նոր Օր» եռօրեայէն: Գրութիւնը մատը կը դնէ թուաքանակի հարցին վրայ:

### ԲԱԶՄԱԾԱԽՈՒԹԻՒՆ, ԲԱԶՄԱԾՆՈՒԹԻՒՆ

Հայ կիները, բովանդակ աշխարհի երիտասարդ հայ կիները, Սփիտքի թէ Մայր Հայուննիքի, առնուազն 500,000 երիտասարդ հայ կիներ, կամատր, քաջ ու ազգասէր կիներ, կրնա՞ն տասը տարի յաջորդաբար մէկական զաւակի ծնունդ տալ... Տասը տարի ետք՝ ճիշդ 5,000,000 աւելի հայ ունենալու համար: Հայ ժողովուրդի յաւերժութիւնը կ'ապահովուի քանի մը հարիւր տարուան համար:

Թիւը անհրաժեշտութիւն է հայ ժողովուրդի յաւերժացման

1 Այս մասին մանրամասնօրէն տեսնել մեր «Կրթութիւն» աշխատութիւնը:

**համար,** թիւը որակ է մեր պարագային: Նախ հայ ժողովուրդին յաւերժացումը, ապա՝ անոր հայրենիքին ազատագրութիւնը, վասնակի առանց ժողովուրդի՝ անիմաստ ու անբովանդակ է հայրենիքը, ինչպէս առանց թոշունի վճարել:

Դժբախտաբար, հայ ժողովուրդը այժմ բազմածին չէ. հայ Աերկա ընտանիքը, Հայաստանի թէ Սփիտոքի մէջ, բազմազաւակ չէ, ասիկա ծանր ճշմարտութիւն մըն է, որուն պէտք է գիտնանք նայիլ ճակատէն, քաշաբար: Պէտք չէ խարենք մենք մեզ:

Գիտացիութիւնը արգասաւորութիւն կը բերէ ժողովուրդի մը, ա՞ն է որ կը բազմացնէ ժողովուրդը: Արդ, արտասահմանի մէջ մենք գրեթէ գիտացիութիւն չունինք, արտասահմանի մեր ժողովուրդին 98,-ը քաղաքացի է, ամէն կերպ քաղքենի կենցաղով: Հայաստանի մէջ դժբախտաբար գիտերը կը պարպուին ի հաշիւ Երևանի և միւս 3-4 քաղաքներուն: Հայաստանի քաղաքացի ու քաղքենի դարձած գիտացիութիւնը դադրած է բազմազաւակութենէ, և հազի՞ մէկ կամ երկու ծնունդերով կը բաւականանայ:

Հայ ժողովուրդը պարտաւոր է տեսնել, որ զինք շրջապատող և իրեն դրացի ժողովուրդները բազմածին են ահաւոր չափերով, Ազրակենացիները, Քիւրուերը, Թիորքերը ի՞րապէս բազմածին են, որովհետև աւելի գիտացի են, շատ աւելի տգետ ու կրօնամոլ: Ու մենք անհուն տիսմարութեամբ մը կը փառաբանենք մէկ միլիոնի մօսեցող և այժմ մէկ միլիոնը անցնող Երևանը, որ կոյր եսասիրութեամբ մը կը քամէ, կը պարպէ ու կը ջնջէ հայ գիտերը: Երևանը պէտք չէր -թոյլ պէտք չէ տայինք- որ անցնէր 250,000-ի թիւը. հանճարեն ակադեմիկոս Թամանեանը Երևանի յատակագիծը շինած էր (գրեթէ 60 տարի առաջ) առաւելագոյն մի միայն 300,000 բնակչութեան համար. անկէ մէկ հոգի աւելին ազգավնասութիւն է...:

Թիւը որակ է մեր պարագային, մանաւանդ քայլ պահելու մեր դրացիներուն հետ, որոնք իրապէս կ'աճին, մինչ մենք կը կարծենք աճիլ:

Եր երբեմն մենք իրապէս կ'աճեինք.

Իսկ այժմ չկայ Թուրքին սուրը, բայց յոգնած է հայ արգանդը:

Մեր կորսուած հողերուն վրայ և նոյնիսկ մեր փրկուած հողակոտրին վրայ մենք չենք աճիր:

Ուրիշներ կ'աճին: Կ'աճին... մեր տեղ:

Մեր դրացիները կ'աճին մեր հողերուն վրայ և մեր հողերուն շուրջ, մեր հողերուն կից:

Թի՞ւ, Էլի՞ թիւ...

Կրկնելով կրկնենք, թիւը կրնայ վաղը որակ բերել, մինչդեռ որակը թիւ չի բերել:

Մեսրոպ Մաշտոց, Նարեկացի, Քուչակ, Կոմիտաս, Աճառեան,

Համբարձումեան շունեցող Քիւրտ ժողովուրդը, իր քաան միլիոն բնակչութեամբ իրերամօս, վաղը կրնայ հանճարներ ծնիլ, անպայման ծնիլ...: Մինչ մենք մեր հանճարներով կը դողանք մեր վաղուան համար: Մեր հանճարները անզօր են մեզ բազմապատկելու: Ագարակներու մէջ ճուտիկներ բազմացնող մեքենաներու այս «թափելու» ենք հայ ծնունդներո...: Երկիրը կը պատկանի աճողներուն ու դիմացողներուն: Առնելտները, մուկերը դիմացան, մինչ մամութեները մահացան:

(Նոր Օր եռորեայ, 9 նոյեմբեր 1984)

#### ՕԳՏԱԳՈՐԾԵԼԻ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆԵՐ.-

Զովումի աղբնչութեամբ՝ մեզի համար շաբեկան է հետևեալ տեղեկութիւնը.- Ըստ Խարազէլեան աղբիրներու՝ ամենէն «դժուար» վայրը ազգային ինքնապաշտպանումի տեսակէտէն՝ Քալիֆունիան է. այլասերումի ուժերը հո՞ն է որ ամէօէն օրենք ազդեցութիւնը կը բանեցնեն: Խսկ Մընթրէալի հրեայ գաղութն է որ ունի առաւելագոյն կարելիութիւնը և միշոցները գոյատելու: Այդ գաղութին ընկերային կուռ և սեղմ կառոյցը, ինչպէս նաև Քեաքրի պաշտօնապէս երկեզու ըլլալը, և որեմն՝ ընձեռուած ազատութիւններն ու դիմութիւնները՝ գլխաւոր պատճառներն են հրեայ համայնքին գոյատեսումը կարելի դարձնող՝ աւելի քան որևէ այլ սփիութեան գաղթօճախ:

#### Զ.- ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՈՒԵՍԼՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ<sup>1</sup>

1920-էն ի վեր Հայաստանի բնակչութիւնը աւելցած է շարունակաբար՝ եթէ նկատի չառնենք 1941-45 հնգամեակը, որ կը զուգադիպի Բ. Համաշխարհային պատերազմին: Այդ տարիներուն Հայաստանի բնակչութիւնը նուազած է զգալիօրէն: 1941-ի 1,360,000-ին փոխան՝ 1945-ին եղած է 1,186,900. 174,000 հոգի նուազ՝ լատ տրուած պաշտօնական թիւներուն:

(Հնդիանուր կարծիքը, սակայն, այն է որ թիւի նուազումը

1 Նկատի պէտք է առնել թէ վիճակագրական տուեալները հիմնականին մէջ վերամշակուած են համաձայն «Հայկական Սովետական Հանրագիտարան»ի 13-րդ լրացուցիչ հաստրին, որ կը կրէ «Սովետական Հայաստան» խորագիրը: Հոն, վերջին տուեալները կը վերաբերի 1985 թուականին: Անկէ յետոյ լորջ վիճակագրական փորձ չէ կատարուած՝ Հայաստանի քաղաքական զարգացումներուն հետևանքով: Նոյնպէս նկատի պէտք է առնել թէ նախկին Խորհրդային Միութեան հանրապետութիւններուն հետ բաղդատական տուեալները, հակառակ Խ. Միութեան ոչ ևս ըլլալոն, պահուած են հիմնական մէկ նկատառումով՝ Հայաստան կը շարունակէ աշխարհագրաքաղաքական նոյն ծիրին մէջ գտնուիլ՝ նոյն ժողովուրդներու սահմանակցութեամբ և դրացնութեամբ:

եղած է շատ աւելի բարձր՝ քան ցոյց տրուած **174,000-ը:** Պատերազմի ընթացքին զոհուածներուն թիւը միայն եղած է **300,000** և աւելի:

Բնական աճը Հայաստանի՝ գրեթէ միշտ եղած է աւելի բարձր քան Խորհրդային Միութեան աճը: 1960-ին յատկապէս, Հայաստանի բնակչութեան աճը եղած է 33.3 առ 1,000. մինչ նոյն տարին ամբողջ Խ. Միութեան աճը եղած է միայն 18.4 անձ՝ իրաքանչիր 1,000 մարդու վրաց:

1960-էն ետք, սակայն, Հայաստանի բնակչութեան աճը սկսած է պականելու տևապէս: Այսպէս, 1970-ին, այդ աճը եղած է միայն 17.0: Եթէ 1960-ին Հայաստանը իր բնական աճին տեսակէտէն Խ. Միութեան մէջ կը գրաւէր 4-րդ տեղը՝ Սուրաբէճանէն, Թուրքմենիստանէն և Իրազէքստանէն ետք (բոլորն ալ խալամական երկրներ), 1985-ին սակայն կը գրաւէր բնական աճով 6-րդ, իսկ ծննդյան մակարդակով՝ 7-րդ տեղը, իր դիրքը զիշելով որիշ երեք խալամական ժողովորդներու:

Քննենք ծնունդ-մահ փոխ-յարաբերութիւնը 1,000 անձի հաշուում՝ Հայաստանի պարագային.

Տարեթիւ	Ծնունդներ	Մահնը	Բնական աճ
1940	41.2	13.8	27.4
1950	32.1	8.5	23.6
1960	40.1	6.8	33.3
1970	22.1	5.1	17.0
1979	22.9	5.6	17.3
1985	24.1	5.9	18.2

Վերևի տուեալներէն կը պարզուի որ Հայաստանի բնական աճը (18.2) արդինք է առաելաբար մահերու նուազումին: Ծնունդներու նուազումը ակնբախ է:

Այդ, ի՞նչ են պատճառները Հայաստանի ծնունդներուն նուազումին: Պատասխանը ժողովրդագրական և տնտեսագիտական բարդ հաշուումներու կը կարօտի: Տանք, սակայն, խորհրդային հեղինակներու կարծիքը:

1.- Ընդհանուր առմամբ Հայաստանի բնակչութեան մշակութային-կրթական մակարդակին բարձրացումը: Յետ-պատերազմեան տարիներուն՝ բարձրագոյն կրթութիւն ստանալու ձգուումը դարձած է հիմնական նպատակը նաև երիտասարդ աղջկներուն մեծ մասին. հետևաբար անոնք սկսած են ամուսնանալու աւելի ուշ՝ 24-25 տարեկանին:

**2.- Զամուսնացածներու և ամուսնալուծուածներու թիւերուն ընդհանուր աճը:** Երիտասարդ այր-մարդիկ տնտեսական և հասարակական այլևազ պատճառներով կը ձգձգեն իրենց ամուսութիւնը. միւս կողմէ՝ յարատնօրէն կ'աճի ամուսնալուծութիւններու թիւը: Օրինակ, 1950-ին 1,000 բնակիչի հաշուով եթէ ամուսութիւններու թիւը 14.8, իսկ ամուսնալուծութիւններու թիւը 0.1 էր, ապա այդ թիւերը 1985-ին համապատասխանաբար կը կազմէին՝ 9.9 և 1.1: Տեղին պիտի ըլլայ նաև դիտել տալ թէ 1979-ի տուեալներով, 16 և բարձր տարիք ունեցող բնակիչներու մէջ պարզուած է հետևեալ պատկերը՝

սեռ	ամուսնացած	բնաւ չամուսնացած	այրի	ամուսնալուծուած
այր	65.4	31.7	1.7	0.9
կին	59.9	23.4	13.2	3.2

**3.- Փոքր թիւով երախայ ունենալու ձգտումը:** Եթէ 1970-ին 3 և անելի երախայ ծնող կամանց թիւը ծնող կիններու ընդհանուր թիւին մէջ կը կազմէր 47.3 տոկոս, ապա 1985-ին այդ թիւը նուազած է 24.6 տոկոսի: Եւ եթէ 1979-ին ընտանիքի միջին կազմը 5 մարդ էր, 1979-ին ան իշած էր 4.7 մարդու:

Սյս թիւերը յաջորդող տարիներուն գգալապէս նուազած են և մէկ երախայով բաւարարութիւը դարձած է տարածուն երևոյթ:

**4.- Վերյիշեալ պատճառներուն որպէս հետևանք՝ լայն տարածում գտած է վիժուում Հայաստանի մէջ, հակառակ պետականորէն արգիլուած ըլլալուն:**

**5.- Քաղաքացին բնակչութեան անընդհատ յաւելում՝ ի վճառ գիւղական բնակչութեան:** Բացազայտ իրողութիւն է որ գիւղական բնակչութիւնն է ծնունդներու աճումին բուն պատճառը, և ան նուազելու վրայ է արագօրէն:

Եթէ համեմատութիւն մը ընենք քաղաքացին ու գիւղական բնակչութիւններուն միջև՝ կը տեսնենք որ 1972-ին, օրինակ, քաղաքացին բնակչութիւնը եղած է 61 առ հարիւր Հայաստանի մէջ, մինչ դրացի հանրապետութիւններէն Աստրավյանանի մէջ քաղաքացին բնակչութիւնը կազմած է երկրի ընդհանուր բնակչութեան 48 տոկոսը, իսկ Վլուատանի մէջ՝ 50 տոկոսը:

Իսկ ի՞նչ կ'ըսեն վիճակագրական տուեալները ընտանիքներու շափերուն մասին:

Կցեալ ցուցակէն կը պարզուի որ Խ. Միութեան մէջ ամէնէն բազմանդամ ընտանիքները ունին քիւրտերը: Աստրավյանացինները անելի արագ կ'աճին Հայաստանի մէջ՝ քան իրենց երկրին: Ռուսերը


ևս աւելի արագ կ'աճին Հայաստանի մէջ՝ քան Ռուսաստան: Հայերու աճը ավլոր նուազ է՝ քան Հայաստանի մէջ:

**Ընտանիքին միջին շափերը՝ ըստ ազգութիւններու և հանրապետութիւններու, Խ. Միութեան մէջ**

ազգեր	Խ. Միութիւն	Հայաստան	Աստրավեցան	Վրաստան
Հայ	4.7	5.0	4.4	4.3
Ռուս	3.4	3.5	3.4	3.2
Ազերի	5.6	5.8	5.6	5.5
Վրացի	4.0	-	-	4.0
Քիւրս	-	6.7	-	-

Բնակչութեան աճը իր վերջնական արտացղացումը կը գտնէ ընտանիքներու թուային շափին մէջ. ո՞րքան մեծ է բնական աճը՝ այնքան բազմանդամ է ընտանիքը, և փոխադարձաբար:

Կ'արժէ կարևորութեամբ անդրադառնալ քիւրտերու բազմածնութեան հետևութեամբ մասնաւուն յարաբերաբար մեր հողային պահանջքը անդրու մասն անդրաբիշայէն: Այսօր մեր պատմական հողերու մակար քիւրտեր են, և այդ նոյն հողերը կը ճկատեն ԻրԵնջը, և հոգն կ'ուզեն հաստատել ապագա քիւրտիստանը՝ այլ հողեր կցելով:



Անցնելէ առաջ Հայաստանի բնակչութեան ազգային կազմի սուեալներուն, տեղին ախտի ըլլայ նշել թէ, ըստ 1986-ի մարդահամարային սուեալներու, հայերու թիւը Խորհրդային Միութեան մէջ կը կազմէր 4,500,000 (3,072,000 Հայաստան. 475,000 Ա-տրպէճան. 448,000 Վրաստան. 365,000 Ռուսաստան. մնացեալ 140,000-ը՝ այլայլ հանրապետութիւններ):<sup>1</sup>

### Հայաստանի բնակչութեան ազգային կազմը 1979-ին

	1959 թիւ սուկու	1970 թիւ սուկու	1979 թիւ սուկու
Ընդհանուր	1763048 100	2491873 100	3037255 100
Հայեր	1551610 88.0	2208327 88.7	2724975 89.7
Ազերիներ	107748 6.1	148189 6.0	160841 5.3
Ռուսեր	56477 3.2	66108 2.7	70336 2.3
Քիւրտեր	256257 1.5	37486 1.5	50822 1.7
Յովներ	4976 0.3	5690 0.2	5653 0.2
Ասորիներ	4326 0.2	5554 0.2	6183 0.2
Ուքրանացիներ	3398 0.3	8390 0.3	8900 0.3
Այլ ազգեր	6688 0.4	12139 0.4	9545 0.3

Վերի սուեալները ցոյց կրու տան թէ հայերու հիմնական զանգուածը կը բնակի Կովկաս և Անդրկովկաս. պարագայ մը, որ աշխարհագրաբաշխական և տնտեսական-մշակութային առում-ներով որոշիչ դրոշմ մը դրած է որ ախտի շարունակէ դնել մեր ժողովրդին վրայ:

Ժողովրդագրական մարզին մէջ, Հայաստանը, որպէս պետականութիւն ունեցող երկիր, կատարած է Ակատառելի աշխատանք խորհրդային շրջանին, որքան որ պայմանները թույլատու գտնուած են: Դժբախտաբար, սակայն, ժողովրդագրական աշխատանքին չէ ընկերացած համապատասխան ընդհանուր ծրագրում և նաև խատեսում մը:

Ժողովրդագրական ծրագրուած աշխատանք չէ կատարուած նաև «Ներքին Սիփիոր» անունով ծանօթ շրջաններու մէջ: Խօսուն է սուկուային լարաբերակցութեամբ յետընթաց պատկերը, որ կը պարզուի հետևեալ աղիսակով, ուր ցոյց կը տրուին հայ բնակչութեան բաշխումի փոփոխութիւնները Խորհրդային Միութեան մէջ,

1 Արցախեան պահանջատիրական շարժումէն անմիջապէս ետք՝ ի հետևանք Սումկայիթի և Պաքուի շարդերուն, Ասորիէճանի մէջ հայութիւն չէ մնացած այսօր, ինչպէս որ Հայաստանի մէջ չեն մնացած ազերիներ:

համաձայն 1980-ին պատրաստուած ուսումնասիրութեան մը, որուն հիմք կը կազմեն տասնամեակ մը տարրերութեամբ երկու մարդաբամարներ:

### **Հայերու տեղաբաշխումը Խորհրդային Միութեան մէջ**

Բնանրապետութիւն	Բայերու թիւ		Բայերու տոկոս	
	1959	1970	1959	1970
Աստրավլյան	442,089	483,520	12.0	9.4
Նսկիչնան	9,519	5,828	6.7	2.9
Վրաստան	442,916	452,309	11.0	9.3
Արխագիա	46,425	74,850	15.9	15.4
Աճարիա	15,830	15,614	6.5	5.0
Ռուսիա	255,978	298,718	0.2	0.2
Չեչեն-Ինքուչ.	13,213	14,543	1.9	1.4
Հիւս.-Օսէթ.	12,012	13,355	2.7	2.4
Թիւրքմենիստան	19,696	23,054	1.3	1.1

Գալով Երևանի, 1915-16-ին 15-էն 20 հազար բնակչութիւն հիշուող քաղաքը այսօր կը հիշուէ շուրջ մէկուկս միլիոն բնակչի: Ծիշդ այսի շուրջա՞ն մէկ խոշոր Երևանի փոխարէն ունենալ երկու կամ երեք փոքր Երևան... . . .

Հետևեալ յատկանշական մէջքերում՝ կատարուող Զօրի Բալայեանին «Օջախ» գործէն, (Երևան, 1981, էջ 385-86), եթէ այսօր կորսնցուցած է իր ահազանգային բնոյթը Հայաստանէն ազերիներու հեռացման հետևանքով, սակայն չէ՝ կորսնցուցած իր շահեկանութիւնը ԾՐԱԳՐՈՒԱԾ ԺՊՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԸ ԱՆՀՐԱԺԵՑՑՈՒԹԻՒՆԸ մատնանշելու առումով:

«... Դժբախտութիւնը այն է, որ մեծ մասամբ նրանք (հայերը) լքում են հայրենեաց հողերը: պատմական Հայաստանի հողերը: Եւ շատերը, դարպասցիների նման դառնալով քաղաքացի (քաղաքանակ), չեն ուզում երկուսից աւելի երեխայ ունենալ:

«Ես յիշում եմ, որ դեռևս Մեղրիի շրջանում, երբ «Վերածնունդը» նոր էր ճանապարհ ելել, հանդիպեցի մի սևազգեստ մոլլայի, որը, մեղրեցիների պատմելով, Ալլահի անունից շրջում էր տնից-սուս: Ինչպէս իմձ բացատրեցին, մոլլաները (նա միմակը չէ) պրոպագանիտական (քարոզչական) քաղաքականութիւն են տանում, որի էութիւնը հետևեալն է. իրաքանչիր մահմետական ընտանիք պէտք է ունենայ տասից ո՛չ պակաս երեխայ. այլապէս Ալլահը կը պատժի՝ նրանց: Եւ ասում են որ նման «քաղաքականութիւն» ազդում է. տասից պակաս երեխաներ չունեն: Դրանում

կարելի է համոզուել թերթելով հերոսութի մայրերի ցուցակները տպող թերթերը: Ցուցակը տպում է Հայաստանում, բայց հայ կնոշ անուան գրեթե չես հանդիպի: Այո՛, սա շատ նորը հարց է: Սակայն դժուար չէ ենթադրել, որ ապագայում կը վերածի սոցիալական այլորեմի (լճկերապին հարցի), որը ստրոկսուրային (կառուցապին) փոխիտութիւններ կը մտցնի հասարակութեան մեջ:

«... Մեղրիի շրջանում տեսածու մոլլայի նման մոլլաների հետագայում տեսածու էի (կամ լուս այդպիսիների մասին) Դաւիանի, Սիսիանի, Ազիզբեկովի, Արարատի, Մասիսի, Վարդենիսի, Կրասնուելսկի, Իջևանի, Նոյեմբերեանի, Կալիմանոյի, Ամասիայի շրջաններում: Եւ աշք փակել դրա վրայ՝ նշանակում է խարել ինքներս մեզ...»:

## Ե.- ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԵՆԵՐՆ ՈՒ ՄՇԱԿՈՅԹԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԵՒ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԵԶ

### 1.- Մուտք

Երբ ազգային համագնք մը իր հայրենիքին մեջ չէ, և իր ազգային ինքնութիւնը կորսնցնելու սպառնալիքին առջև կը գտնուի, կամ՝ արդէն կորսնցնելու սկսած Է՝ ՍՓԻՌՈՒՔ է, ո՞ր երկրին մեջ ալ գտնուի, այդ երկիրը ի՞նչ վարչածն ու կեցուածք ալ ունենայ, ի՞նչ ալ ըլլան մայրենի հողեն զինք զատող պատճառն ու հեռաւորութիւնը, ի՞նչ ալ ըլլայ իր հայրենիքն ստացած օգնութիւնը: Հետևաբար, խորհրդային արտասահմանը ՍՓԻՌՈՒՔ էր, որովհետու կը գըտնուէր Հայաստանէն դորս և իր ինքնութիւնը կորսնցնելու սպառնալիքին առջև էր և արդէն կորսնցուցած էր զայն շատ մը տեղեր:

### 2.- «Ներքին Սփիլոք»ի թուաքանակը

Արտասահմանի հայութեան թուաքանակային հաշուումը կատարելու ատեն ԱՆՀՐԱԺԵՇ է գաղութի մը թիւը գնահատել յարաբերաբար իր ԱՄԵՆՈՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ՔԱՆԱԿԻՆ ՈՒ ՈՐԱԿԻՆ: Չմոռնա՛նք,- լեզու և մշակոյթ հիմնատարերն են ազգային պատկանելիութեան: <sup>1</sup>

Հիմա որ պարզած ենք փոքրամանութեան մը թիւը որոշելու առընչութեամբ մեր որդեգրած մօտեցումը՝ քննենք «Ներքին

1 Անշուշտ կարելի է «խաղալ» թիւերով...: Չմոռնանք այն նշանաւոր խօսքը՝ թէ վիճակագրութիւնը թիւերով ստելու թեքնիքն է...: Արդարն, կարելի է վիճակագրութեան (և ժողովրդագրութեան) մօտենալ տարբեր հասկացողութիւններով, և նույն ՏՈՒԵԱԼՆԵՐԻՆ ՄԵԿՍԵԼՈՎ՝ ՀԱՄԻԼ, ՀԻՄ-ՆՈՎԻՆ ՏԱՐԲԵՇՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒԻ:

Սփիտք»ի թուային կացործիւնը, և փորձենք հասնիլ ԱՌԱՐԿԱՅԱ-  
ԿԱՆՕՐԾՆ ՀԱԽԱՆԱԿԱՆ գումարներու:

1970 թուականին կատարուած մարդահամարին համաձայն, Ռուսաստան ապրող 298,718 հազերէն 198,409-ը ընդունած են հայերէնը որպէս իրենց մայրէնի լեզու, մինչ 100,309 հազեր ոռուերէնը նկատած են մայրէնի լեզու իրենց համար:<sup>1</sup> Անշուշտ հետաքրքրական պիտի ըլլար իմանալ թէ՝

ա.- Հայերէնը որպէս մայրէնի լեզու ընդունողներէն քանի՛ն հայերէն գիտէր բաւարար չափու.

բ.- Ի՞նչ էր իրական պատկերը 1990 թուականին:

Մօտաւոր պատասխան մը միշտ կարելի է գտնել ներկա-  
յացնելով հայկական դպրոցներու և հայկական մշակոյթին հաւա-  
նական վիճակը տուեալ երկիրներուն մէջ:

### 3.- Խորհրդային Միութիւն

Սկսինք Ռուսաստանով, որ միշին դարերէն սկսեալ հայկական  
գաղութներ գոյութիւն ունեցած են, բայց ժամանակի ընթացքին  
կորսնցուցած են իրենց ազգային նկարագիրը և ձուլուած՝ երբ նոր  
գաղթականներ չեն եկած գօրացնելու զանոնք:

#### ա.- Մուկուա

14-րդ դարուն, Խրիմէն ու Աստրախանէն բազմաթիւ հայեր  
բնակութիւն հաստատած են Մուկուա: Լազարեանները, որոնք  
մետաքսի գիծով տիրացած էին հսկայ հարատութեան և կը վարէին  
պետական բարձր պաշտօններ՝ 1815-ին Մուկուայի մէջ կը հիմնեն  
Լազարեան Շեմարանը:

Խորհրդային իշխանութեան տարիներուն, Լազարեան Շե-  
մարանը կը վերածուի Հայկական Մշակութային Տոնի: Բ. Հա-  
մաշխարհային Պատերազմի աւարտին, ան կ'առնուի հայերէն և կը  
դառնայ Լոմովմայի անուան՝ արտասահմանէն եկած ուսանող-  
ներու արևելեան համալսարան: Հետագային, Վերակառուցման  
(Փերեւաթողքա) տարիներուն, որպէս արդիւնք բազմաթիւ դի-  
մումներու, կը վերադարձուի ան հայերուն և պահ մը կը գործածուի  
որպէս Հայաստանի ներկայացուցական տուն, կացարան և հայերէն  
սորվիլ փափաքոյ պատահներու թէ չափահասներու համար ոչ-  
լման ժամանակով դպրոց:

Անցեալին, Մուկուայի մէջ ունեցած ենք եռուն ազգային-

1 Նոյն մարդահամարին համաձայն, 2,203,554 հայաստանաբնակ հայեր  
ընդունած էին հայերէնը որպէս իրենց մայրէնի լեզու, մինչ 4,773  
հայաստանաբնակ հայեր մեծ մասամբ ոռուերէնը նկատած էին իրենց  
մայրէնի լեզու:

մշակութային կեանք: Այսօր թէս ջանքեր կը կատարուին ազգային կեանքը վերաշխռութացնելու ոռոսական մայրաքաղաքին մէջ, կը հիմնուին մշակութային կազմակերպութիւններ, կը հրատարակուին թերթեր, զարկ կը տրուի կրօնական հաստատութիւններու, բայց հեռու է ան գոհացուցիչ պատկեր մը ներկայացնելէ: Հայերտն թիւն է շուրջ 100,000, բայց անոնք ոռոսախոս են արդէն մեծ մասով:

#### **բ.- Լեռինկրատ**

Կացութիւնը համարեա նոյն է հոս ալ: Ոչինչ մնացած է անցեալի եռուն կեանքէն: Զկայ արևելագիտուական համալսարանին հայկական ամսիոնը: 1970-ի մարդահամարին համաձայն, ոռոսական այս երթեմնի մայրաքաղաքին մէջ կ'ապրէնը իրենց մայրենի լեզու ընդունող 6,628 հայեր, առանց մէկ հատ իսկ հայկական դպրոցի:

#### **գ.- Աստրախան**

Հոյն ալ անցեալին ունեցած ենք հարուստ և եռուն կեանք: Նշանաւոր եղած է յատկապէս Աղապատեան դպրոցը՝ հիմնուած 1810-ին: գաղութը 1870-ին ունեցած է իր Հոգևոր Ռուսումնարանը, ինչպէս նաև հայ աղջիկներու յատուկ դպրոց մը: Այսօր ոչի՞նչ մնացած է անցեալի հաստատութիւններէն: Հայերը ցրուած են. կիսաքանդ եկեղեցիներ վկաներն են երեւմնի եռուն կեանքին:

#### **դ.- Գագան**

Տակաւին 15-16-րդ դարերէն ան ունեցած է հայկական գործօն գաղութ մը: 1842-ին տեղույն համալսարանն ունեցած է հայկական ամսիոն, որ դասախոսած է յայտնի հրապարակագիր Ստեփաննոս Նազարեանը: Հոս ևս ներկան տխուր վկան է հարուստ անցեալի մը:

#### **ե.- Գրասնոտարի երկրամաս**

Հիւսիսային Կովկասի մէջ Հայաստանէն քանի մը անգամ ընդարձակ այս ինքնավար շրջանը ունեցած է հայկական հոծ գաղութ մը 15 և 16-րդ դարերուն: 1842-ին, երբ երկրամասը միացուած է Ռուսիյ, չերքեզահայեր փոխադրուած են Գուպան գետին աջ ափը, որ դարս քանական թուականներուն պահ մը մտածուած է փոխադրել Արևմտեան Հայաստանէն բռնահսնուած հայու տարագիր բեկրները: 1847-ին Արմատիրի մէջ բացուած է հայ տղոց յատուկ վարժարան մը. 1865-ին՝ ծխական դպրոց մը. 1873-ին՝ հայ աղջիկներու յատուկ վարժարանը: Հայկական դպրոցները գոցուած են Բ. Համաշխարհային Պատերազմէն եւր, և հայ աշակերտներ ակսած են յաճախելու ոռոսական դպրոցներ:

1974-ի տուեալներուն համաձայն, Արմափիր կը բնակէին 8,200 հայեր, որոնք զուրկ էին հայկական վարժարանէ:

#### 4.- Նոր Նախիջևան

Մոլոտավիպէն ու Պեսարավիպէն գաղթած հայեր 1780-ին հիմք դրած են այս զուր հայկական քաղաքին: Եկատերինէ Բ. ձարուիին ազգային ներքին ինքնավարութիւն շնորհած է անոնց. այս կարգադրութեան շնորհի, Տոն գետի ափին հաստատուած են բազմաթիւ հայկական գիւղեր՝ իրենց դպրոցներով և կազմակերպութիւններով: Ի դեպ, հայկական առաջին վարժարանները բացուած են գաղութին հիմնադրման ակզբանական տարիներուն:

Հիւսիսային Կովկասի ամբողջ տարածքին կան հայկական քաղաքներ ու գիւղեր, որոնք ներկայիս զուրկ են հայկական դպրոցներէ, իսկ հոն ուր դեռ բաց են դպրոցները՝ հայերէնի դասաւանդումը կը գտնուի շատ անբաղձակի վիճակի մէջ: Այդ է պարագան նաև Տոն-Ռոստովի շրջանի հայկական դրոցներուն, ուր կ'ըստի թէ կ'աշակերտներ 2,000 հայ պատասկաններ:

Կար ժամանակ երբ Ռուսութիւն մէջ կը բանէր շրջանի դպրոցներուն համար հայ ուսուցիչ սպարասող մանկավարժական ուսումնարան: Զկայ ան պաօր, և յուսահատական է վիճակը հայկական դպրոցներուն:

#### Է.- Ուքրանիա

Անցեալին Ուքրանիոյ զանազան շրջաններուն մէջ գոյութիւն ունեցած են հայկական բազամամարդ գաղթօճախներ, մանաւանդ Խրիմի թերակղզին մէջ, զոր միջին դարերու ենովացի վաճառականներ կոչած են «Ծովային Հայաստան»: Օրինակ, միայն Կաֆա քաղաքին մէջ հայերը 18-րդ դարուն ունեցած են աւելի քան 30 եկեղեցի՝ կից հայկական դպրոցներով:

Մայրաքաղաք Քիեվը ևս ունեցած է կարևոր թիով հայեր տակաւին 9-10-րդ դարերուն: Հոն գտնուած է քիեվեան թագաւորութեան առաջին եկեղեցիներուն նախակարապետը նկատուող հայկական գետանափոր մատուն:

Հայ գաղութը վերակազմակերպելու ներկայ ճիգերը չափազանց վտիտ են տակաւին, և հեռո՛ գոհացուցիչ արդինք տալէ:

Պատմական արձանագրութիւններ ցոյց կու տան թէ տակաւին 1590 թուականին հոն գոյութիւն ունեցած է 80 աշակերտներով հայկական դպրոց. հետագային բացուած են հայկական հոգևոր գիշերօթիկ վարժարան, աղջիկներու յատուկ դպրոց, ծխական ու թաղային կրթարաններ. մինչև իսկ գոյութիւն ունեցած են հայկական թանգարան, գրադարան և տպարան:

Հիմա՞....:

Անմխիթարական է պատկերը նաև Տոնեցի մէջ, ուր կ'ըստով թէ կան 6,000 հայեր. Օռեսապի մէջ, ուր կ'ապրին 3,500 հայեր. Խարքովի մէջ, ուր իրենց գոյութիւնը դեռ կը շարունակեն 4,800 հայեր, և Քիեզի մէջ, ուր հայոց թիւը կը տրուի 3,000 թուանշանով.... Ո՞ւր են հայկական դպրոցները այս շրջաններուն:

## բ-- Աճդրկովկաս

Հայեր շատ կանուխէն հաստատուած են Աճդրկովկաս՝ Վրաստան ու Աստրական: Թիֆլիսը հայկական հնագոյն գաղթօճախներէն է:

18-րդ դարուն Թիֆլիսի 20,000 բնակչութեան 14,500-ը հայելած են: 1824-ին բացումը կատարուած է անուանի Ներսէսեան Վարժարանին: Թիֆլիսը եղած է արևելահայութեան մեծագոյն մշակութային կեդրոնը 19-րդ դարուն: Այսօր թէն Թիֆլիսի մէջ բաց են հայկական դպրոցներ և բանուկ են հայ մշակութային կազմակերպութիւններ ու եկեղեցիներ, բայց աշակերտութեան թիւը կծկում մէջ է, և երիտասարդութիւնը մեծ մասով վրացախոս կամ ուսախոս է: Վրաստանի 450,000 հայութեան 150,000-ը կ'ապրի Թիֆլիս:

Պաթումը Աճարիայի կեդրոնն է՝ կցուած Վրաստանի: 18-րդ դարու սկիզբներէն բազմաթի հայեր կը բնակին հոն: 1970-ի մարդահամարը Աճարիոյ հայերուն թիւը կը գտնէր շուրջ 21,700՝ առաւելաբար Պաթում բնակող: Ներկայիս հայոց թիւը նուազած է Պաթումի և յարակից շրջաններու մէջ, իսկ հայկական բանի մը բանուկ վարժարանները բոլորովին հեռու են գոհացուցիչ վիճակ պարզել:

Վաղ միջնադարէն հայեր հաստատուած են Արխագիոյ մէջ: 1949-ին հայոց թիւը հոն կը հասնէր 100,000-ի: 1969-ին հայկական դպրոցներու թիւը Արխագիոյ մէջ 55 էր՝ 10 միջնակարգ և 38 ուժամեաւ: Ներկայիս հազիր 25 վարժարաններ «կը գործեն» հոն:

Հայեր կը բնակին նաև Օրջոնիկիձէ, Գրոզնի, Մախաչկալա, Նալչիկ, Դերբենտ, Պիտիկորսկ, և այլուր. սակայն հայկական վարժարաններ չեն բանիր նշուած վայրերուն մէջ:

Արխագիոյ հայերուն թիւը ներկայիս շուրջ 70,000 է:

Աստրականի մէջ ևս հայեր բնակած են հնագոյն շրջաններէն: Պաքուն եղած է հայկական բազմամարդ կեդրոն՝ ազգային հաստատութիւններով, դպրոցներով, եկեղեցիներով, տպարաններով, մամուլով, թատրոնով: Հայեր եղած են Պաքուի նաւթարդիւնաբերութեան գլխաւոր մղիչ ուժը: Ներկայիս հայկական ո՛չ մէկ ազգային-մշակութային երևոյթ կայ հոն:

Նախիջևանի Խճմավար Մարզը անմիջական իշխանութեան

Աերքն է Աստրպէճանի: Նախախորհրդային շրջանին շուրջ 45 հայկական վարժարան և աւելի քան 2,000 աշակերտութիւն ունեցող այս մեծամասնաբար հայերէ բնակեցուած շրջանը համարեա դատարկուած է հայ բնակիչներէ և ո՞չ մէկ հայկական ազգային կենանք կայ հոն:

Դեռ մինչև մօտաւոր անցեալը 480,000 հայութիւն հաշուող Աստրպէճանի մէջ (այդ թիւը կ'ընդգրկէր արցախահայութիւնը ևս), այսօր չափազանց նօսր քանակութեամբ հայեր մնացած են Արցախի ազատագրական պայքարին և ազերիներու հայասպան քաղաքականութեան հետևանքով:

#### **4.- Պուլկարիա և Ռումանիա**

Նախընկերվարական շրջանին, Պուլկարիա և Ռումանիա ունեցած են հոծ թիւով հայկական գաղութներ՝ թերթերով, մշակութային կազմնակերպութիւններով, Եկեղեցիներով և դպրոցներով, որոնք գուտ հայկական էին:

Համշախարհային Բ. Պատերազմէն եսք, փոխուեցաւ հայոց կացութիւնը և հայկական վարժարաններու մէջ հայերէնի դասաւանդումը դարձաւ երկրորդական, հայկական նիւթերու ժամերը սահմանափակուեցան. հակակշոյ տակ առնուեցան հայ թերթերը և ամէն ազգային գործունեութիւն:

Սեղմումները պատճառ եղան որ հայեր արտագաղթեն Պուլկարիոյ և Ռումանիոյ գլխաւոր քաղաքներէն:

Այսօր, յատկապէս Սոֆիայի, Փլովստիվի, Վառնայի և Պուքրէշի հայերը ցոյց կու տան վերազարդնումի նշաններ, բայց ընդհանոր արդինքը տակալին հեռու է գոհացուցիչ ըլլալէ:

#### **5.- ԲՆԱԿՉԱՅԻՆ ԱՃԸ ԵՒ ՄԵՆՔ**

Այս գլուխին մէջ հերթաբար պիտի անդրադառնանք հետևեալ հիւթերուն.-

- Մեծ Եղեռնին զոհուած հայոց թիւը.
- Ներգաղթ և արտագաղթ.
- Օտարացած հայեր.
- Հայութեան ընդհանուր թիւը:

#### **ա.- ՄԵծ Եղեռնին զոհուած հայերուն թիւը**

Ընդհանուր կարծիքը այդ թիւը կը զետեղէ մէկուկսէն երկու միլիոնի միջն՝ համաձայն «զոհ» բառին տրուող սահմանումնն: Եթէ ԶՈՀ նկատենք միայն անոնք, որոնք սպաննուեցան կամ մեռան թուրքերու կողմէ՝ հաւանաբար թիւը մէկ ու կես միլիոն է. բայց եթէ զոհեր նկատենք նաև անոնք, որոնք հոգեապէս, իմացապէս ու

Փիզիքապէս քայքալուեցան՝ թիւը պէտք է նկատել շատ աւելի խոշոր:<sup>1</sup>

### Բ.՝ Ներգաղթ և արտագաղթ

Գաղղթը, անկախ իր յառաջ բերած թուային փոփոխութիւններէն, և այդ փոփոխութիւններուն պատճառած խնդիրներէն՝ ունի նաև իր ազդեցութիւնը տեղափոխուող անհատներուն և խոմքերուն ազգային-հոգեբանական որակին վրայ:

Ամէն անձ, որ կը հեռանայ իր բնակավայրէն՝ արդէն «տարատնկուող» ծառ մըն է, և իր արմատներուն վրայ մնացած «հին» հողը չի բաւեր զինք պահպանելու և ապրեցնելու. ակամայ, պէտքը պիտի ունենայ «նոր» (օտար) հողի, չորի, օդի, ևալին:

Ուրիշ հարց մըն է գործի (ասպարեզի) պարագան. յաճախ նոյն ասպարեզները «նոյնը» չեն տարբեր երկիրներու մէջ:

Հիմնական նշանակութիւն ունեցող երևոյթ մըն է՝ այլ վայրերէ նոյն երկիրը գաղթող նոյնազգի անհատներու և խոմքերու պարագան: Օրինակ, Ամերիկայի մէջ պարզուեցաւ որ Մերձաւոր Արևելքէն եկող հայերը տարբեր էին ո՛չ միայն Միջին Արևելքէն (Իրանէն), և Հայաստանէն եկող ներէն՝ այլև իրարմէ՛: Եթ այս տարբերութիւնը պատճառ էր բազմաթիւ հարցերու գոյառումին՝ լեզուի, մտացնութեան, մտածելակերպի, հասկացողութեան մարգերու մէջ:

Անկախ իրենց ազգային ու քաղաքական նշանակութենէն՝ ներգաղթն ու արտագաղթը նա՛խ և առաջ ԹՈՒԱՔԱՆԱԿԻ հարց են, մանաւանդ փոքր ժողովորդի մը պարագային:

Ըստ կարգ մը խորհողներու՝ ներգաղթը Սիինորէն Հայաստանի հիմապ «անիրաժեշտութիւն» էր, որովհետո Բ. Համաշխարհային Պատերազմին պատճառով բազմաթիւ հայ զինուրիներ գոհուած էին ճակատներուն վրայ:

Այս կորուստին հետևանքով գգալիօրէն նուազած էր Հա-

1 Բ.Ժ. Երուանդ Խաթանասենը ոնի «Հայոց Թիւը» անունով խիստ շահեկան աշխատութիւն մը, հրատարակուած Պութոն 1965-ին, որ 19-րդ դարուն կատարուած մարդահամարներու և ճանապարհորդներու կամ դեսպաններու տեղեկութիւններուն հիման վրայ ցեղասպանութեան զոհերու թիւը կը ներկայացնէ առ նուազն մէկ ու կէս միջիոն: Միջանկեալ նշենք թէ բժիշկը յայտնաբերելով թէ 1844-1877, 33 տարիներու ընթացքին, հայերու թիւը Օսմանեան Կայսրութեան մէջ մնացած է նոյնը, մինչ յոյներունը՝ կրկնապատկուած, հակառակ անոր որ այդ շրջանին հայոց հասաքական տեղահանութիւն, արտագաղթ կամ բացայաց կոտրուած տեղի չէ ունեցած, կ'եզրակացնէ թէ երևոյթը կրնայ բացատրուիլ միայն մէկ կերպ,՝ այդ տարիներուն «վիթխարի թիւվ հայեր ամէն տարի տևական առևանց գումներով, թթացումով, քրտացումով և լոր ու անաղմուկ մասնակի շարդերով» խուեր են հայութեան ծոցէն (Էջ 10-11):

յաստանի հայ բնակչութեան թիւը, և ասիկա ճակատագրական նշանակութիւն ունէր հայ ժողովուրդին համար: Ըստ Խորհրդային Սահմանադրութեան, երբ հանրապետութիւն մը մէկ միլիոնէն նուազ բնակչութիւն ունենայ՝ կը դադրի ինքնավար հանրապետութիւն ըլլալէ, ու կը դառնայ մարզ մը: Հայաստանի պարագային՝ այդ հայկական մարզը պիտի կցուէր Վրաստանին կամ Ասրաբէճանին:<sup>1</sup>

Եթէ ներգաղլթ «անհրաժեշտութիւն» էր Հայաստանի համար՝ Սփիտքի համար չէ՞ր՝ դատելով իր հետևանքներէն: Պատճառ դարձաւ բազմաթիւ հաստատուած գաղութներու քայլայումին ու տարսունումին, փոխեց ամբողջ պատկերը Սփիտքի ազգային կեանքին. յատկանշական օրինակ մըն է պարսկահայութեան պարագան. գաւառաբնակ պարսկահայութեան նկատելի մէկ մասը ներգաղլթ Հայաստան. և որովհետև տարսունուած էր այդ շրջաններու հայութիւնը որպէս համայնք՝ մնացեալ մասը գաղթեց Թեհրան՝ թէ՝ պարպելով գաւառը, ու թէ՝ բազմաթիւ բարդութիւններ յառաջացնելով թեհրանահայ կեանքն ներս:

Ներգա՞լթ է նաև հայերու Հայաստան տեղափոխումը «Ներքին Սփիտք»էն՝ ի՞նչ ալ ըլլան այդ տեղափոխումին պատճառները: Ամէն պարագայի, Հայաստան վերադարձող այդ հայերը, հեռաւո՞ր թէ մօտիկ անցեալին հեռացած ըլլան Հայաստանէն, Թիի-ի վերածուելէ առաջ նախ կը պարտին վերահայանալ…:

Արտագաղլթը դէափ Սփիտք՝ որիշ պատճառ մըն է թուային նուազում՝ Հայաստանի համար: Անհատներու տեսանկիւնն դիտուած՝ թերևս որոշ չափով մը «արդարանալի» ըլլայ ան. բայց ազգային տեսակետէ դիտուած՝ վտանգաւոր երևոյթ մըն է ան: Եթէ խորհրդային վերջին տարիններուն և յատկապէս Հելսինքիի համաձայնագրի «ընտանիքներու վերամիաւորման» տրամադրութիւններուն համաձայն Հայաստանէն արտասահման ու յատկապէս Մ. Նահանգներ արտագաղլթողներու թիւը հասած էր 50,000-ի, ապա Հայաստանի անկախացումն եւոք ոչ-պաշտօնական տուեալներ Հայաստանէն արտագաղլթողներու (Արևմուտք թէ նախսին խորհրդային երկիրներ) թիւը կը հասցնեն 600,000-ի:

Արտագաղլթի լորջ անապատեհութիւններէն մէկը կ'ըլլար և կ'ըլլայ ստեղծուած բացին լեցուիլը տարբեր մշակոյթներու և

1 Ասրաբէճանի Համայնավար Կոսակցութեան Ա. Քարտուղար Միր-Ճաֆար Պաղիրովը Ստովինին մահին եւոք դատավարութեան ենթարկուած պահուն բացայացուած էր թէ ծրագրուած էր 1953-ին հայերու մէծ բռնագաղլթ մը կազմակերպել Հայաստանէն և անոր բնակչութիւնը մէկ միլիոնէն նուազ դարձնելով՝ զայն զրկել հանրապետութիւն նկատուելու իրաւուքն ու ենթակայ դարձնել Ասրաբէճանի և Վրաստանի տիրապետութեան:

կրօնքներու պատկանող ժողովուրդներով...:

Թուաքանակի կապակցութեամբ այսոք է յիշել նաև պարագան գործ գտնելու նպատակով ամէն տարի Հայաստանէն դորս տեղափոխուող երիտասարդներու և ընտանիքներու: Այս մէկը, ընդհանրապէս, թիրի հնես որակի անմիջական կորուսի ևս կը վերածոի, որովհետև լաւագոյն ուսում ունեցողներ և ստեղծագործ միտքի տեր անհատներ առաւելաբար կ'օգտուին նման առիթներէ:

#### գ.- Օտարացած հայեր

Կարելի չէ թիր-ի յատկացուած այս գլուխին մէջ չանդրադառնալ օտարացած հայերու պարագային, որ մեզմէ ԲԱԶՄՍԹԻԻ ՄԻԼԻՌՆԵՐ կլած է պատմութեան ընթացքին:

Բուն խնդիրը այն է որ մեր ժողովուրդը ո՞չ միայն ոչինչ ըրած է առաջքը առնելու համար օտարացումին, ո՞չ միայն ոչինչ ըրած է օտարացածները ես բերելու ուղղութեամբ, այլ նոյնիսկ ՀԱՅԱԾԱԾ է ԶԱՆՄՆՔ, իսկ եկեղեցին՝ բանադրած:

Կարելի չէ ճշդել թէ քանի՞ միլիոն է պատմութեան ընթացքին օտարացած հայերու թիր: Անհետացած են խոշոր հայաքականութիւններ, ինչպէս՝ Լեհաստանի գաղութը:

Օտարացումը տեղի ունեցած է ո՞չ միայն Սփիրոքի մէջ, այլ նաև նոյն ինքն Հայք Հայաստանի հողին վրայ՝ գլխաւորաբար քաղաքական բոնութեան որպէս հետևանք:

Քանի մը խօսք հայերու թքքացումին և քրտացումին մասին:

Սուրու սրբուող թիւերն ու ծանօթութիւնները առնուած են Հայ Յարութիւն Պօտիկեանի մէկ գրութենէն՝ լոյս տեսած «Հայ Կեւանք» շաբաթաթերթին 27 Մարտ 1987-ի համարին մէջ: Հայ Պօտիկեան, իր կարգին, այդ ծանօթութիւնները քաղած է Հայր Ղուկաս Խնճիճեանի «Աշխարհագրութիւն Նոր Հայաստանի» գիրքէն: Հայր Խնճիճեան Հայաստան ճամբորդած է 1800-ի սկիզբը, և որեմն՝ իր հայքայթած տեղեկութիւնները շուրջ երկու դարու հնութիւն ունին. տարիներ, որոնք ամէնէն արինուու էջերը պիտի կազմէին հայոց պատմութեան: Եթէ Հայր Խնճիճեանը այսօր գրէր իր գիրքը՝ ստրու սրբուող թիւերը պիտի բազմապատկինք առատօրէն.-

Պատմական իրողութիւն է որ 12-րդ դարուն, սելճուքեան բրոնակալութեան շրջանին, բազմաթի հայեր իսլամացած են: Իսլամացումը զանգուածային համեմատութիւններու հասած է 17-րդ դարու վերջերը և 18-րդի սկիզբները, երբ հայերը արդէն 100 տարիէ ի վեր կ'ապրէին ուապէս «օսուար փոքրամասնութիւն» իրենց սեփական հողերուն վրայ՝ ենթակայ անհաշի բռնութիւններու և կենեքումներու: Ցանախ ամբողջ գիւղեր բոլոր խաւերով իսլամացած են:

Ահա՝ ցանկը գլխաւոր գաւառներուն, որոնց հայ բնակիչները

իզլամացած են, այսինքն՝ թրքացած կամ քրտացած։ Տրուած թիւերը մօսաւոր հաշուումներ են. իսկ ցանկը կրնայ շատ աւելի երկար ուղալ.-

Համշէն	44,000
Եւդոկիա (Թոգար)	12,000
Երգնկա	225,000
Տիվրիկ	7,000
Արաբկիր	24,000
Թորթում	2,500
Կամախ	200,000
Մանազկերտ	200,000
Ախալցիս	30,000
Արդուին	70,000
Ռումգալէ (Հռոմկալալ)	7,000
Մարանդ (Զարևանդ)	85,000
Իսքեան (Տիգրանակերտի շրջան)	15,000
Պիթլիս (Բաղէշ)	10,000
Մուշ	10,000
(Կ'ենթադրուի որ այս շրջանի 25 գիւղերուն քիւրտ բնակիչները սերած են պատիկեաններէն և թոնդրակեցիներէն)	
Դայազիտ	150,000
Բասէն	15,000
Եւազն	.....
Գումար	աւելի քան մէկ միլիոն

Հայր Ինճիճեանը աւելի առաջ տանելով իր պատմական պրպտումները՝ «քիւրտ» բառը կը նկատէ ծագած հայկական «Կորդոք» նահանգին անունէն, իսկ կարգ մը քիւրտ ցեղանուններ՝ հայ նախարարական ընտանիքներու անուններէն։ Այսպէս՝

Սրիիվանցի քիւրտեր	Սլկունեաց տոհմէն
Ռոշկանցիներ	Ռշտունեաց տոհմէն
Մէնտէքիներ	Մանդակունի տոհմէն
Մանըցիներ	Մամիկոնեան տոհմէն, ևայլն։
Ինճիճեանը նաև կը նշէ այլ կէտ մը՝ շատ մը քիւրտերու հայկական ծագում ունենալը ցոյց տուող.- Հայաստանի քիւրտերուն խօսած բարբառը, որ կը կոչուի Չագա, ո՞չ վրանաբնակ քիւրտերուն ծանօթ է, ո՞չ ալ Միջագետքի քիւրտերուն. ան որոշ նմանութիւններ ունի Սասունի, Մուշի և Խնոսի բարբառին հնտ։	

Տաճք Հայր Պօտիկեանին եղերականօրէն սրտաճմլիկ ու իրապաշտ վերջաբանը.-

**«Եզրակացնեմ:** Հ. Ղոկաս վրդ. Ինճիճեանի այցելութեանէն անցած են ուղիղ 180 տարիներ: Անընդհատ կոտորածները, տեղահանութինը և 1915-ի Մեծ Աղէտը, բարին բռն իմաստով, բնաշնչեցին հայոց երկրի քրիստոնեայ հայ ժողովորդը, բայց ի՞նչ եղան «յազգէս հայոց դարձելոց» թրացած և բրտացած միիմնը անցնող բազմութինները..., բազմացան, եռապատկուեցան՝ անտարակոյս: Եւ այսօր, որբացած իրենց կրօնքէն, աշխարհացրի եղբայրներէն ու քոյրերէն, անգիտակից կը կոխկրտեն իրենց հայրենի հողը և պատենական սրբութինները... օստարամուտ գողերու նման, որ չըլլայ թէ օր մը հայերը գան և տէր կանգնին իրենց հայրենիքին»:

#### Դ.-Հայութեան ընդհանուր թիւը (թուաքանակը)

Երբ կ'ըսենք թուաքանակ՝ կը հասկնանք ՅԱՐԱՏԵԽՕՐԵՆ ԱՃՈՂ ԹԻՒ, որովհետև առանց անհրաժեշտ համեմատութեամբ մեծցող աճումի՛ ԹԻՒ-ը չի կրնար երաշխաւորել ժողովուրդին շարունակական կենսունակութինը:

Կայ կէտ մը ևս-- ժողովուրդի մը թիւը «միոքը» կամ «մեծ» է՝ բաղդատած նաև զինք շրջապատղ միւս ժողովուրդներու թիւին, և այդ թիւին արձանագրած աճումին:

Ի՞նչ եղած է հայ ժողովուրդին թիւը. Ի՞նչ է այսօր....: Ի՞նչ կը պարտէր եղած ըլլալ ան մինչև 2,000 թուականը: Բացի շարդերէն ու եղեռնէն՝ ուրիշ ի՞նչ պատճառներ արգելք եղած են մեր թիւին աճումին:

Ա. Համաշխարհային Պատերազմէն առաջ, 1912-ին, Պոլսյ Պատրիարքարանին կողմէ պատրաստուած մօտաւոր վիճակագրութեան համաձայն՝ Արևմտեան Հայկական վեց նահանգներու ամբողջ խառն բնակչութեան թիւը եղած է 2,615,000.-

ազգութիւն	թիւ	տոկոս
Հայեր	1,018,000	38.9
Թուրքեր	666,000	25.4
Քիւրուր	424,000	16.3
Ուրիշներ	507,000	19.4
<b>Հանրագումար</b>	<b>2,615,000</b>	

Տանք մամուլէն առնուած տախտակ մը, որ կը ներկայացնէ հայերու ամբողջական «մօտաւոր թիւը» 1914-ին.-

**Հայերու «ամբողջական» թիւը 1914-ին**

Արևմտեան Հայաստան	1,403,000
Արևելեան Հայաստան	1,296,000
Թուրքիոյ այլ շրջաններ	440,000
Կովկասի այլ շրջաններ	508,000
Իրան	140,000
Պողիս և Եւորպական Թուրքիա	183,000
Ռուսական սահմաններու մէջ	250,000
Եւրոպա, Հնդկաստան, Եգիպտոս	120,000
Ամերիկա	130,000
Գումար	4,470,000

Նոյնը կարելի է ներկայացնել նաև հետևեալ տախտակով.-

**Հայերու «ամբողջական» թիւը 1914-ին**

Կրկիր	Ընդհ. թիւ	Մոլու
Ռուսական Կայսրութիւն	2,054,000	45.9
Օսմանեան Կայսրութիւն	2,026,000	45.4
Ուրիշ երկիրներ	390,000	8.7
Գումար	4,470,000	

Հիմա ընենք մօտաւոր հաշիւ մը թէ հայութեան թիւը ի՞նչ կրնար ըլլալ մինչև 1988՝ եթէ աճեինք շուրջ 2.0 առ հարիւր համեմատութեամբ.-

**Հայութեան ակնկալելի թիւը 1988-ին**

Հայաստան	3,300,000
«Ներքին Սիիոք»	1,700,000
Սիիոք	2,000,000
Խալամացած հայեր	1,000,000

Ահաւասիկ նոյն տախտակը՝ այս անգամ որակային տեսանկիւնէն ալ դիտուած՝ տալու համար աւելի իրապաշտ պատկեր մը հայութեան ակնկալելի թիւին մասին 1988 թուականին.-

Հայաստան	2,800,000 (500,000 օտարներ)
«Ներքին Սփիտք»	500,000 (1,200,000 կորսուած)
Սփիտք	1,200,000 (800,000 կորսուած)
Իւլամացած	0 (1,000,000 կորսուած)
 Գումար	 <b>4,500,000</b>

Այժմ, վերջին տախտակին վրայ հիմնուելով, և ցարդ տրուած ծանօթութիւնները մէկտեղելով, փորձենք ընել «Հայաստենութիւն-ներ» 2025 թուականին առընչութեամբ: Նկատենք որ աշխարհի բնակչութիւնը կ'աճի 25 տարին անգամ մը կրկնապատկուելու համեմատութեամբ: Իրապաշտ ըլլալու համար մենք 25-ի փոխարէն պիտի առնենք 35 տարի:

Մեկնելով բ. տախտակէն՝ հայութեան վիճակը 2025 թուականին պիտի ըլլալու մասին:

Հայաստան	{	1990	2,800,000
		2025	5,600,000
«Ներքին Սփիտք»	{	1990	500,000
		2025	1,000,000
Սփիտք	{	1990	1,200,000
		2025	2,400,000
Իւլամացած հայեր	{	1990	1,000,000
		2025	2,000,000
 Գումար			 <b>11,000,000</b>

Ծանօթութիւն.- Եթէ նոյնիսկ իրականանայ նման ենթադրական հաշուում մը՝ Հայաստանի 5,600,000-ը տակաւին 1,400,000-ով նուազ պիտի ըլլայ ակնկալուած 7 միլիոնէն 2025 թուականին ալ: Եօթը միլիոնը կը նկատենք տրամաբանական անհրաժեշտ թիւ մը՝ ազգի մը ներուժ գոյութեան համար:

1 Աշխարհագրագէտ Գրիգոր Աւագեանը 1990-ի համար «մօտաւոր սուեալներով» հայութեան որպէս ընդհանուր թիւ կու տայ հետևեալ պատկերը.-

Հայաստան	3,500,000
«Ներքին Սփիտք»	1,173,200
Սփիտք	2,383,400
Իւլամ համշենահայեր	4,000,000
 Գումար	 <b>11,056,600</b>

Անշուշտ իրական պատկերը գլխավոր տարբեր պիտի ըլլայ վերսի տախտակի նախատեսութենէն: Նոյնիսկ եթէ շարունակուի «քննական» ընթացքը մեր կեանքին,- 1.5 զաւակ ընտանիք գլուխ, պիտի նուազի՝ մեր թիւլ: որպէսզի պահպանուի «ներկայ» թիւլ՝ 1.5-ը պէտք է բարձրանալ 2.2-ի, միջին մը՝ որ իրագործելի ըլլալէ շատ հեռու է, սրուած ըլլալով մեր ազգին պամանելոք:

Հաւանական «իրական» պատկերը հայութեան թիւին 2025-ին՝ մեկնելով այսօրուան վիճակէն:-

<b>Հայաստան</b>	<b>1990՝</b>	<b>2,800,000</b>	<b>2025՝</b>	<b>5,000,000</b>
<i>(Փոխանակ՝ 5,600,000-ի. նուազումը՝ արդինք արտագաղթի, ընտանիքներու փոքրացումին, ամուսնութիւններու յապաղումին, ևայլն.)</i>				
<b>Սփիտոք</b>	<b>1990՝</b>	<b>1,200,000</b>	<b>2025՝</b>	<b>700,000</b>
<i>(Նուազում՝ արդինք համատարած այլասերումի).</i>				
<b>«Ներքին Սփիտոք»</b>	<b>1990՝</b>	<b>500,000</b>	<b>2025՝</b>	<b>50,000</b>
<i>(Նուազում՝ արդինք համատարած այլասերումի).</i>				
<b>Գումար</b>				<b>5,750,000</b>

Արդ, ճիգը, որ կը պարտինք կատարել համազգային մասնակցութեամբ՝ պէտք է ձգտի իրագործել հետևեալ տախտակով ներկայացուող թիւերը առ նուազն.-

<b>Հայաստանի բնակչութիւնը պարտի ըլլալ.-</b>
<b>(1987՝ 2,800,000)</b>
<b>2000՝ 4,500,000</b>
<b>2025՝ 10,000,000</b>
<b>Սփիտոքի բնակչութիւնը պարտի ըլլալ.-</b>
<b>(1987՝ 1,200,000)</b>
<b>2000՝ 1,600,000</b>
<b>2025՝ 1,400,000 (Կրկինը նախատեսուածին)</b>
<b>«Ներքին Սփիտոք»ը պարտի ըլլալ.-</b>
<b>(1987՝ 500,000)</b>
<b>2000՝ 300,000 (Նախատեսուածէն 100,000 աւելի)</b>
<b>2025՝ 100,000 (Նախատեսուածէն 50,000 աւելի)</b>
<b>Գումար</b>
<b>(1987՝ 4,500,000)</b>
<b>2000՝ 6,400,000</b>
<b>2025՝ 11,500,000</b>

## IV- ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

### **Ա.՝ Եզրակացութիւն**

Վերջին տախտակները կը բացայացնեն թէ անհաշի աշխատամք կայ կատարելի:

Իբրև առաջին քայլ՝ պէտք է ԱՆՄԻՋԱՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵՆՔ Համարայկական Ժողովրդագրական Ծրագիր մը, որ նկատի առնելով Հայաստանի և Սփիտքի իրարմէ բոլորովին տարբեր առանձնայատկութիւնները՝ ձգտի հայութեան թիւը հասցնել առնուազն ՏԱՍԸ ՄԻԼԻՈՆԻ Հայաստանի մէջ, և ՄԷԿՈՒԿԵՍ ՄԻԼԻՈՆԻ Սփիտքի և «Ներքին Սփիտք»իմէջ:

**1.- Որպէս հաւաքականութիւն՝ հայութիւնը կը ճերկայանայ երեք մասերով.-**

ա.- Հայաստան

բ.- Սփիտք

գ.- «Ներքին Սփիտք»

Թուաքանակը գլխաւոր խնդիրներէն մէկն է հայութեան այս երեք մասերուն ալ՝ թէս տարբեր աստիճանով, և տարբեր բնոյթի:

ա.- Հայաստանի համար թիւ-ը պեսութեան մը ազգային գոյութեան և բարգաւառումի խնդիրն է. իր արմատաւորումին և ինքնահաստատումին հա՛րցն է:

բ.- Սփիտքի պարագային՝ թիւ-ը նախ և առաջ ֆիզիքական գոյատևումի խնդիր է, և անշոշո՞ւ ազգային շարունակականութեան: Սփիտքի մէջ թիւն ու թուային որակը վտանգուած են:

գ.- «Ներքին Սփիտք»ի մէջ ևս թիւն ու թուային որակը վտանգուած են մեծապէս և կը դիմագրաւեն ազգային շարունակականութեան հարցականներ:

**2.- Լեզու, դպրոց, ընտանիք, ազգային կառոյցներ ու գաղթ՝ հիմնատարրերն են հայութեան գոյութեան և գոյատևումին. անոնք մօտէն կապ ունին թուաքանակին հետ, և պէտք է տևական ուշադրութեան առարկայ ըլլան:**

**3.- Թուաքանակի հարցին առընչութեամբ պէտք է ծրագրեալ գործակցութիւն ստեղծուի Հայաստանի, Սփիտոքի և «Ներքին Սփիտոք»ի միջն. հայութեան այս երեք հասուածներն ալ թիին ԽՆԴԻՐ ՌԻՆԴՆ, խնդիր՝ որ անցեստաձգելի է:**

**4.- Հայաստանէն արտագաղթը մահարեր արիւահոսութիւն մըն է, որ հարկ է փութով կասեցնել: Յարակցաբար, Հայաստան և Սփիտոք ու «Ներքին Սփիտոք» պէտք է շանան միասնաբար քննել արտագաղթողներու տեղաւորումն ու բնակութեան վայրի ընսրութիւնը:**

**5.- Պէտք է ՄԱՍՆԱԽՈՐ խնամքի առարկայ ըլլան այն գաղութները մանաւանդ, որոնք թէ՝ թուապէս, ու թէ՝ կարելիութիւննեով աւելի խոստմնալից են ներկայիս, կամ որոնք հաւանական է որ մօտիկ ասպագային դառնան կարեոր: Օրինակ՝ Ամերիկայի Միացեալ Նահանգները և Քանատան ներկայիս կը թուին ըլլալ ամէնէն ԶԵՐՆՏՈՒ գաղութները՝ այն իմաստով որ ամէնէն գործօններն են, թիւով ամէնէն արագ աճողները, և նիւթապէս ամէնէն զօրաւորները:**

Այս, անշուշտ, չի նշանակեր անտեսումի մատնել Լիբանանը, Իրանը, Պոլսը, Սուրբան, Եգիպտոսը, Հարաւային Ամերիկան, Աւստրալիան....:

Հայաստանի մէջ 1980-ին կազմակերպուած էր Գիտութիւններու Կաճառի Սփիտոքահայ Համայնքներու Պատմութեան և Մշակոյթի Ուսումնասիրութեան բաժինը, որ դրական երևոյթ մըն էր, բայց գլխաւորաբար կը զբաղէր անցեալը գիտականօրէն ուսումնասիրելու և ճանչնալու տեսական աշխատանքով, մինչ կը շարունակուէր Սփիտոքի քայլայումը և կը ծաւալէր արտագաղթը Հայաստանէն....:

**Անցեալի ուսումնասիրութիւնը կարեոր է այնքանով, որքան ան այլասերումի, ուծացումի և ձուլման բո՞ն դրդապատճառներն ու եղանակները կը յայտնաբերէ և ներկայ արիւահոսութիւնը կասեցնելով ապագայ քայլերը կը մատնանշէ:**

## **Բ.- Թեղադրութիւններ**

Փափաքելի պիտի ըլլար որ, դա՛րձեալ Գիտութիւններու Կաճառին հովանիին ներքև, կեանքի կոչուէր հայրենաբնակ և սփիտոքաբնակ ու «Ներքին սփիտոքաբնակ» ընկերաբաններէ ու ժողովրդագիրներէ բաղկացած խորհրդակցաժողով մը (think tank), որ իր մնայուն ուսումնասիրութեան առարկան դարձնէ՝ բոլոր հայ հաւաքականութիւններու կենսապայմանները, անոնց փոփոխութիւնները, այդ փոփոխութիւններուն հետևանքով յառաջացող տեղաշարժային տրամադրութիւնները, այդ տրամադրութիւնները ազ-

գային կարելի առաւելագոյն շահաւետութեամբ հունաւորելու կերպերը:

Արդ,

ա.- Անհրաժեշտ է ԽՍԿՈՅՆ կազմակերպուիլ ստեղծելով ԱՌԺԱՄԵՍԱՅ ՄԱՐՄԻՆ մը.

բ.- Առժամեայ Մարմինը պէտք է անմիջապէս պատրաստէ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ մը, որուն առաջին կէտք պէտք է ըլլայ մշակումը մարդաբանամարի արդիական դրութեան մը բովանդակ աշխարհի հայութեան համար, և ապա կատարումը ընկերաբանական և ժողովրդագրական ընդհանուր ուսումնասիրութեան մը, որ ընդգրկէ բոլոր կարևոր երեսները հայ հանրապին կեանքին:<sup>1</sup>

գ.- Պէտք է ծրագրուի հայ ժողովուրդի թուային աճի և թուային բաշխումի նախագիծը՝ առ նուազն գալիք 25 տարիներուն վրայ տարածուող ապա նաև հետապնդոյի այդ նախագիծը:

Մարդաբանարը պէտք է կրկնուի կանոնաւորաբար, գումէ 7-10 տարին նագամ մը՝ Հայաստանի, Սփիուքի թէ «Ներքին Սիիուք»ի մէջ ստացուած արդիւնքները պէտք է վերածուին վիճակագրական տախտակներու, և վերլուծուին. այդ վերլուծումներու հիմամբ՝ պէտք է որդեգրուին սրբագրումի և ապաշաճեցումի նոր միջոցներ ու կերպեր:

Թուաքանակի և թուային բաշխումի մարզին մէջ, անհրաժեշտ է որ ազգովին ունենանք կեդրոն մը, որ քաջակերէ հայութեան աճումը, և կատարէ վերաբնակեցումի կենսական աշխատանք՝ իմաստունօրէն:

Կատարելի բազմաթիւ աշխատանքներէն մէկն է քաջալերումը անհատներու և խումբերու, որ հաստատուին ընկերապին-տնտեսական ու քաղաքական տեսակետէ կարևոր վայրերու մէջ, շէնցնեն զանոնք, ու օրացնեն զգացումը հայրենի հողին կառչած մնալու, և անոր բնակչութիւնը բազմացնելու:

Մէկ Խօսքով, ընենք ամէն բան, որ 2025 թուականին հայութիւնը ունենայ իր հայրենական և ազգային կենսունակութիւնը բոլո՞ր մարզերու մէջ ապահովելու չափ թիւ, և, հետևաբար, համաշխարհապին աւանին մէջ իր կենսագործունեութիւնը նոր որակի հասցնելու կարողականութիւն (potential):

1 Թերևս տեղին և օգտակար ըլլայ այս կապակցութեամբ օգտուիլ հրեաներու փորձառութենէն. անոնք ընկերաբանական և ժողովրդագրական ուսումնասիրութիւններ կը կատարեն կանոնաւորաբար, և մօտէն կը հետևին ժողովուրդին թուային հարցերուն:

**Եկե՛ք կազմենք ազգային  
ծրագիր մը, որ  
2025 թուականին  
Հայաստանի մէջ ունենանք  
առ նուազն  
ՏԱՍԸ ՄԻԼԻՈՆ  
արգասարեր հայութիւն,  
իսկ Հայաստանէն դուրս՝  
ՄԷԿՈՒԿԵՍ ՄԻԼԻՈՆ  
ուժական հայեր:**

---

# **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

Էջ

ՄՈՒՏՔ (Դոկտ. Վաչէ Ղազարեան)

VII

## **ԹՐԻԱՔԱՆԱԿ**

I - Սահմանում և ծանօթութիւն	3
II - Աշխարհի բնակչային կացութիւնը	4
III - Ժողովրդագրութիւնը և հայերը	12
IV - Եզրափակում	44